Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 20.03.2024թ. չորեքշաբթի թիվ 13 (1142)

Գիշերահավասար

Թողություն տուր, Տե՛ր, ծանը Խավարին,
Միայն թե թող Նա թողնի հեռանա...
Պարույր ՍԵՎԱԿ

Ո՞րն է գարնան առաջին օրը. ըստ աշխարհի ընդունած Հուլյան **օրացույցի՞**, թե՞ **Աստծո** հաստատած **տիեզերական հերթագայության**...

Վաղը **լույսը** հավասարվելու է խավարին...

Վաղը **մարտի 21**-ն է՝ **գարնանային գիշերահավասարի** օրը: Այդ օրվանից օրերը երկարելու են, ցերեկվա տեւողությունն ավելանալու է, ու շատանալու է լույսը...

Հին հայերը նոր տարվա հաշվարկը սկսել են **մարտի 22**-ից՝ գիշերահավասարին հաջորդող օրվանից՝ նախորդ օրը նշելով որպես տարեմուտի տոն... Կա՞ ավելի տրամաբանական մեկնարկ, քան մեր նախնիներինն էր. **բնության նոր տարվա** առաջին օրվանից սկսած՝ ավելանում էր ցերեկվա տեւողությունը, օրերը երկարում էին, լցվում աշխատանքով, մտքի ու բազկի աստվածահաճո գործերով...

Արդ, մարտի 22-ից տիեզերքում հաստատված կամքով **Աստծո՝ Երկրի** վրա **բնական նոր տարեշրջանն** է սկսվում...

Ու գարունն արդեն եկել է... Հողն արթնացել, դեն է նետել ճերմակ սավանը, ոտքի է ելել նոր քայլել սովորող մանկան պես ու անվարժ շարժումներով իր կանաչ հանդերձներն է փորձում հագնել... Բնության զարթոնքի հետ մենք էլ մեր մարմնի ու հոգու արթնացումն ուղղորդում ենք դեպի **աշխատանք**...

Առջեւում գարնան **երազն** է, ամռան **Գործը**, աշնան **Հուշը**... Ու երեքը միասին՝ **Կյանքը՝ Ժամանակի** ու **Տարածության** հետ՝ **Երկնքից** մշտապես մեզ իջնող պարգեւը մեծագույն... Արդ, ըմպենք մեր բաժին լույսը՝ ցմրուր, օրներս՝ բարի, գարունը՝ բարի...

Նոր-նոր **լույսը** հավասարվում է խավարին... Ու *մեր պատմությանն ու ճակատագրին* դեմ-հանդիման՝ մեր *ստեղծածով* ու մեր *հավատով*, մեր *ունեցածով* ու մեր *կորցրածով*, մեր *երազանքով* ու մեր *գալիքով*, մեր *անցյալով* ու մեր *ապագայով*, մեր *երկրով, այսօրվա* ու *վաղվա* մեր *հայրենիքով*, *հնարավոր պատերազմով* ու *անվերապահ* ***հաղթանակով՝*** **լույսի** ու խավարի միջեւ հավասարված նժարներով՝ գնում ենք դեպի **Գարունը՝** մեր **պատմության գիշերահավասարը** հաղթահարելու, ավելացնելու լույսը ներսի ու դրսի, մեր կյանքի ու մեր երկրի ժամանակի մեջ կրճատելու մեր եւ մեր միջեւ *տարածություն* ու *սահման՝* մինչեւ **Վերածնունդ, Մեծ Վերադարձ** ու **Նոր Արշալույս**...

Եղիցի՛ գարուն անանձնական:

Գ. Մ.





«Ակադեմիական քաղաք»

Աշխատանքային քննարկում՝ ռեկտորների հետ

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** աշխատանքային քննարկում է ունեցել ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են *«Ակադեմիական քաղաք»* նախագծի ընթացքին, կրթաթոշակային նոր քաղաքականությանը եւ ոլորտին առնչվող մի շարք հարցեր:

Հանդիպմանը ներկա է եղել ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը:**

ԿԳՄՍ նախարարը նշել է, որ բոլոր բուհերից ստացված արձագանքների հիման վրա ՀՀ պետական բուհերի խոշորացման եւ գիտահետազոտական կազմակերպությունների հետ ինտեգրման գործընթացի շրջանակում ձեւավորվել են աշխատանքային խմբեր՝ ոլորտային կազմակերպությունների ներգրավմամբ: Նախարարը շնորհակալություն է հայտնել բուհերի ռեկտորներին՝ պատրաստակամության, բարձր մասնակցայնության եւ ներկայացված առաջարկների համար:

շարունակությունը՝ էջ 2

Մշակույթ

Ներկայացվել են ոլորտում իրականացվող նոր նախագծերը

«Արմենպրես» մամուլի ակումբում հրավիրված ասուլիսի ընթացքում ներկայացվել են մշակույթի ոլորտում իրականացվող օրենսդրական բարեփոխումներն ու նոր նախագծերը: Ասուլիսի բանախոսներն էին ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Ալֆրեդ Քոչարյանը** եւ **Դանիել Դանիելյանը:**

Ներկայացնելով *«Թանգարանների մասին»* ՀՀ օրենքը՝ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը նշել է, որ դրա մշակումը պայմանավորված է *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի»* կատարմամբ, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի ճանապարհային քարտեզի միջոցառումների կատարման պահանջով:

շարունակությունը՝ էջ 3

Արցախ

Երկամյա ծրագիր՝ ուղղված բռնի տեղահանված բնակչության կարիքներին

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանն** ընդունել է Եվրոպայի խորհրդի Երեւանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար **Մաքսիմ Լոնգանգեի** գլխավորած պատվիրակությանը:

Պատվիրակության այցը պայմանավորված է ՀՀ-ԵՄ 2023-2026 թթ. գործողությունների ծրագրում ներառված՝ *«Սոցիալական ոլորտում մարդու իրավունքների ամրապնդում ՀՀ-ում»* երկամյա ծրագրի մեկնարկով: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Արցախից բռնի տեղահանվածների եւ, առհասարակ, ՀՀ-ում սոցիալական իրավունքների ամրապնդմանը:

շարունակությունը՝ էջ 3

Նախագիծ

Փոփոխություններ՝ խորհրդի ձեւավորման կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեւավորման կարգում»* փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

Համաձայն հիմնավորման՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրման գործընթացին զուգընթաց վերանայվում է կառավարման խորհուրդների ձեւավորման կարգը՝ արդյունավետ կառավարման, խորհուրդների անդամների մասնակցայնության, հաշվետվողականության եւ թափանցիկության մեխանիզմների ապահովման, ինչպես նաեւ դաստիարակության գործառույթի պատշաճ իրականացման համար ծնողներին կրթական գործընթացում ներգրավելու նպատակով: Կառավարման խորհուրդների խոշորացումը էականորեն կապված է համայնքների խոշորացման, ինչպես նաեւ կրթական կլաստերների, կրթահամալիրների ստեղծման գործընթացի հետ:

Ներկայում տնօրենի նշանակման գործառույթը վերապահվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնին, եւ խորհրդի հիմնական գործառույթը հանդիսանում է հաստատությունում ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրների շրջանակը:

Դպրոցի կառավարման խորհրդի գործառույթներն առավել արդյունավետ եւ օբյեկտիվ դարձնելու, խորհուրդների հետագա անկախ, անկաշկանդ եւ արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով նախագծով առաջարկվում են մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, եթե գործող կարգի համաձայն՝ 3000 բնակչություն ունեցող բնակավայրերում գործող հաստատությունների դեպքում ձեւավորվում են առանձին, իսկ մինչեւ 3000 բնակչություն ունեցող բնակավայրերում կամ համայնքներում գործող հաստատությունների դեպքում՝ միացյալ խորհուրդներ, ապա սույն փոփոխությամբ սահմանվում է, որ միասնական խորհուրդները ձեւավորվում են՝ ներառելով առավելագույնը 2500 սովորող ունեցող հաստատություններ՝ ընդգրկերով առավելագույնը 7 ավագ, հիմնական կամ միջնակարգ դպրոց: Այսինքն՝ միավորումն իրականացվում է՝ ըստ ենթակա հաստատությունների: Գործող կարգավորման փոխարեն նախագծով առաջարկվում է խորհրդի անդամների առավելագույն թիվը սահմանել 17 անդամ:

Նախատեսվում է, որ տվյալ համայնքից խորհրդի կազմում կարող է ներգրավվել նաեւ կենսաթոշակի անցած՝ հանրակրթության ոլորտի փորձառու մասնագետ կամ ուսուցչական արհեստակցական միության անդամ:

Հստակ սահմանվում է նաեւ, թե ով կարող է լինել խորհրդի անդամ, եւ ինչպես է համալրվում խորհուրդը:

Հ. Հ.

Աշխատանքային քննարկում՝ ռեկտորների հետ

սկիզբը՝ էջ 1

«Բուհերն այս ընթացքում հանդես են գալիս կոնկրետ առաջարկներով եւ ակտիվորեն մասնակցում են աշխատանքային խմբերի քննարկումներին, ինչը շատ կարեւոր է: Այժմ ընթանում են ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակման աշխատանքները: Գործընկերների գնահատմամբ՝ նախատեսված տարածքը բավարար է մեր պատկերացրած ֆունկցիոնալ հնարավորությունները ստանալու համար»,- ասել է ԿԳՄՍ նախարարն ու ընդգծել՝ ուսումնասիրվում են բազմաթիվ շերտեր, իրականացվում է մանրակրկիտ աշխատանք:

Ակադեմիական քաղաքի նախագծային աշխատանքներում ընդգրկված է նաեւ ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանը՝ հանդիսանալով ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող գերմանական gmp International GmbH Architects and Engineers ընկերության գործընկերը: ՃՇՀԱՀ ռեկտոր **Եղիազար Վարդանյանը,** ներկայացնելով նախագծային աշխատանքների ընթացքը, նշել է, որ ակադեմիական քաղաքի հայեցակարգը նախագծվում է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով. *«Նախագիծը քննարկվում է ամենայն մանրամասնությամբ՝ դիտարկելով յուրաքանչյուր դետալ: Մեր իրականության մեջ քաղաքաշինական որեւէ նախագիծ, թերեւս, այսպիսի մանրամասնությամբ չի քննարկվել մասնագետների կողմից: Այս նախագիծը մեզ համար՝ որպես ճարտարապետության եւ շինարարության ոլորտում կրթական ծրագիր իրականացնող բուհի, շատ հետաքրքիր եւ ուսանելի նորություն է»:*

Անդրադառնալով բովանդակային հարցերին՝ ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է՝ նախարարությունն առանձին ուղղություններով հայեցակարգային 36 առաջարկ է ստացել բարձրագույն ուսումնական հաստատություններից, որոնց մշակման եւ ամփոփման աշխատանքներում, բացի Հայաստանի ոլորտային փորձառու կազմակերպություններից եւ բուհերից, ներգրավվելու են նաեւ միջազգային գործընկերներ:

Հանդիպման ընթացքում բուհերի ղեկավարները ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկները:

Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ ակադեմիական քաղաքի սահիկաշարն առաջիկայում կներկայացվի բուհերի ռեկտորներին, եւ յուրաքանչյուր բուհում կլինեն հանդիպումներ՝ ծրագրի մանրամասների ներկայացման ու քննարկումների նպատակով:

Բուհերի ռեկտորների հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաեւ բուհերի խոշորացման գործընթացին: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ գործընթացը բավականին բարդ է եւ բազմաշերտ, բայց դրա շրջանակում ցանկացած քայլ կատարվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների անմիջական ներգրավմամբ:

«Յուրաքանչյուր բուհի հետ կունենանք առանձին քննարկում՝ ներկայացնելով նախագիծը: Սա բարդ եւ երկարատեւ գործընթաց է, որը չի կարող արդյունավետ իրականացվել՝ առանց բուհերի հետ համագործակցված աշխատանքի: Այս առումով նախարարությունը, Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն եւ բուհերը գործընկերներ են, որոնց միավորում է բարձրագույն կրթության եւ գիտության որակի բարելավումը, որը ենթադրում է բուհերում հետազոտության բաղադրիչի ուժեղացում: Կարեւորում ենք բուհական հանրույթի հետ արդյունավետ համագործակցությունը եւ կարծում ենք՝ երկխոսությունը պետք է հանգեցնի այնպիսի մի իրավիճակի, որ «Ակադեմիական քաղաք» ծրագիրը հանրային ընկալումներում դիտարկվի ոչ միայն Կառավարության կամ նախարարության, այլեւ առաջին հերթին բուհերի ծրագիր: Ծրագրի իրական պտուղները տեսանելի են դառնալու ապագայում. դրա իրական շահառուներն այսօր դեռ դպրոցում սովորող աշակերտներն են, որոնց համար մենք ցանկանում ենք ապահովել որակյալ եւ մրցունակ բարձրագույն կրթության հնարավորություն»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաեւ ՀՀ կառավարության կողմից կրթաթոշակի տրամադրման նոր քաղաքականությունը, ըստ որի՝ պետության համար կարեւոր եւ առաջնահերթ մասնագիտություններով ընդունելության գրավչության բարձրացման եւ առավել պահանջարկ ունեցող աշխատատեղերի համալրման խնդրի համաչափ կարգավորման նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարի հաստատվում է գերակա մասնագիտությունների ցանկ, եւ այդ մասնագիտություններով ընդունվածներին տրամադրվում է բարձր կրթաթոշակ: Ժաննա Անդրեասյանը բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին առաջարկել է ներկայացնել առաջարկներ՝ մասնագիտությունների ցանկի համալրման նպատակով:

Հանդիպման ընթացքում բուհերի ռեկտորները ներկայացրել են նաեւ իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերել են գիտական գործունեության նոր չափանիշներին, գնումների գործընթացին, մասնագիտությունների եւ տեղերի հաստատմանը եւ ընթացիկ մի շարք այլ խնդիրների:

1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալներ՝ Մաթեմատիկայի միջազգային կովկասյան 9-րդ օլիմպիադայում

Մաթեմատիկայի միջազգային կովկասյան 9-րդ օլիմպիադայում (ՄՄԿՕ) ՀՀ թիմն արժանացել է 1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալների:

Օլիմպիադան անցկացվել է Ռուսաստանի Դաշնության Ադիգեյի պետական համալսարանում (ք. Մայկոպ), մարտի 11-16-ը: Մրցույթին մասնակցել է 13 երկրի (Հայաստան, Պերու, Բելառուս, Բուլղարիա, Ուզբեկստան, Աբխազիա, Տաջիկստան, Սերբիա, Ղազախստան, Թուրքմենստան, Թաիլանդ, Դոմինիկյան Հանրապետություն, Հարավային Օսեթիա) եւ Ռուսաստանի Դաշնության 18 տարածաշրջանների ավելի քան 160 աշակերտ: Օլիմպիադան նախատեսված էր 2 տարիքային խմբերի համար՝ պատանիների (9-րդ եւ 10-րդ դասարաններ) եւ ավագների (11-րդ եւ 12-րդ դասարաններ): ՀՀ թիմը հանդես է եկել պատանիների տարիքային խմբում:

Հայաստանը ներկայացրել է Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի չորսհոգանոց թիմը: Դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ **Սարգիս Առաքելյանն** արժանացել է ոսկե, **Էլեն Քեշիշյանն** (9-րդ դասարան) ու **Արման Ասատրյանը** (10-րդ դասարան)՝ բրոնզե մեդալների, իսկ 9-րդ դասարանի աշակերտ **Գրիգոր Սամվելյանը**՝ գովասանագրի: Թիմը ղեկավարել է ֆիզմաթ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ **Նարեկ Մկրտումյանը:**

Օլիմպիադայի շրջանակում կազմակերպվել է մշակութային ծրագիր, որի ընթացքում դպրոցականները ծանոթացել են Ադիգեայի պատմությանը եւ մշակութային արժեքներին, այցելել տեսարժան վայրեր: Կազմակերպվել են ժամանցային եւ սպորտային միջոցառումներ, ինչպես նաեւ բաց դասախոսություններ՝ անվանի գիտնականների եւ մաթեմատիկայի մասնագետների մասնակցությամբ:

Հիշեցնենք, որ Մաթեմատիկայի միջազգային կովկասյան 8-րդ օլիմպիադայում, որը նույնպես անցկացվել էր առկա ձեւաչափով, պատանիների տարիքային խմբում մեր մասնակիցներն արժանացել էին 4 բրոնզե մեդալների:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երկամյա ծրագիր՝ ուղղված բռնի տեղահանված բնակչության կարիքներին

սկիզբը՝ էջ 1

Ողջունելով հյուրերին՝ Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության բարձր մակարդակն ու դրա հետագա զարգացումը: Անդրադառնալով ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիների կարիքներին՝ Արթուր Մարտիրոսյանը նախ ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերը՝ միտված նրանց հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ կրթության իրավունքի իրացմանը: Փոխնախարարի խոսքով՝ ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 17 հազար սովորող ընդգրկվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում:

Եվրոպայի խորհրդի Երեւանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Մաքսիմ Լոնգանգեն շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ բարձր գնահատել ՀՀ կառավարության գործադրած ջանքերը ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիների կարիքների արագ արձագանքման եւ դրանց լուծման շուրջ իրականացված աշխատանքների առումով:

Մաքսիմ Լոնգանգեն տեղեկացրել է՝ *«ՀՀ-ում սոցիալական ոլորտի մարդու իրավունքների ամրապնդում»* երկամյա ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը՝ ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիների եւ խոցելի խմբերի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

Այս համատեքստում կարեւորվել է կրթություն-աշխատաշուկա կապը՝ ծրագրի շրջանակում ընդգծելով նախնական եւ միջին մասնագիտական հաստատությունների հետ համագործակցության խթանումը:

«Կրթություն-աշխատաշուկա դինամիկ կապերի ամրապնդումը մեր կարեւորագույն մարտահրավերներից է: Աշխատանքի վրա հիմնված կրթության զարգացումը, կրթական ծրագրերի բարելավումն ու միջազգային չափանիշներին համապատասխանեցումը կրթական բարեփոխումների առաջնային խնդիրներից են»,- նշել է նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Նա նաեւ տեղեկացրել է, որ Ազգային ժողովում վերջերս առաջին ընթերցմամբ քննարկվել է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագիծը, որով առաջարկվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելի ինստիտուցիոնալացում՝ շեշտը դնելով մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման վրա:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ լրացուցիչ եւ շարունակական կրթության համատեքստում կարճաժամկետ կրթական ծրագրերի ներդրման, վերապատրաստումների եւ այլ ծրագրերի իրականացման հնարավորությունը:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԵՄ քարտուղարության Մարդու իրավունքների ծրագրերի համակարգող **Մարգարիտա Գալստյանը:**

Ներկայացվել են ոլորտում իրականացվող նոր նախագծերը

սկիզբը՝ էջ 1

«Այսպիսով՝ առաջին անգամ անկախ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թանգարանների ոլորտն ունեցավ կարգավորող հիմնական մայր օրենք, որը չափազանց սպասված էր եւ կարեւոր: Այն կարգավորում է թանգարանների գործունեության հետ կապված հարաբերությունները, սահմանում թանգարանների տեսակները, գործառույթները, ՀՀ թանգարանային հավաքածուի ձեւավորման, համալրման, հաշվառման, պահպանության, օգտագործման, անվտանգության սկզբունքները»,- նշել է Ալֆրեդ Քոչարյանը:

Նրա խոսքով՝ օրենքով ամրագրվում են լիազոր պետական մարմնի լիազորությունները, թանգարանների աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, թանգարանային կրթության իրավական հիմքերը եւ մի շարք այլ լիազորող նորմեր: Ըստ Ալֆրեդ Քոչարյանի՝ օրենքից բխելու են մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք ավելի մանրամասն կկարգավորեն տվյալ ոլորտը: *«Օրենքի ընդունմամբ՝ կապահովվեն մշակութային ժառանգության պահպանության եւ պաշտպանության համակարգված գործունեությունը, մշակույթի ոլորտում տնտեսական նոր մեխանիզմների զարգացումը, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միջեւ ծագող հարաբերությունների կարգավորումը: Օրենքի նախագիծը մինչեւ ԱԺ ներկայացնելը երկար ուսումնասիրել ենք այս ոլորտում համաշխարհային փորձը, ինչպես նաեւ «ԹԱՅԵՔՍ» տեխնիկական օժանդակության եւ տեղեկատվության փոխանակման գործիքի շրջանակում քննարկումներին ներգրավել եվրոպացի մեր գործընկերներին»,*- ընդգծել է բանախոսը:

Ալֆրեդ Քոչարյանն անդրադարձել է նաեւ Կառավարության որոշմամբ վերջերս ստեղծված *«Մշակույթի զարգացման հիմնադրամին»:* Նրա խոսքով՝ հիմնադրամի ստեղծման դրույթն ամրագրված է *«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»* օրենքում, ինչպես նաեւ *«ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունում»: «Շատ կարեւորում ենք այս հիմնադրամի գործունեությունը. դրա ստեղծման դրդապատճառներից մեկն այն է, որ երբ գույքագրում էինք ոլորտի խնդիրները, հասկացանք, որ դրանցից մեկը ոլորտի հանրահռչակումն է: ՀՀ մշակութային ժառանգությունը շատ հարուստ է, եւ երբեմն այն ներկայացնելու արդյունավետ ճանապարհներ են պետք: Հետեւաբար, հիմնադրամի միջոցով կմեկտեղվի մարքեթինգային գործունեությունը, եւ այն կիրականացվի ավելի կենտրոնացված: Երկրորդ դրդապատճառը թանգարանների ոլորտում կառավարման մոդելի փոփոխությունն է. հիմնադրամը կիրականացնի կազմակերպավարչատնտեսական գործառույթները՝ այսպիսով բեռնաթափելով թանգարանների ծանրաբեռնվածությունը: Եվ երրորդը՝ կիրականացվի հաշվապահական գործառույթի պատվիրակում. այն կկատարվի մեկ տեղից՝ գործընթացը դարձնելով առավել թափանցիկ եւ արդյունավետ»,*- ընդգծել է փոխնախարարը:

Ըստ Ալֆրեդ Քոչարյանի՝ ակնկալվում է, որ այս ամենի արդյունքում ոլորտում կարձանագրվեն ավելի բարձր արդյունավետություն, առավել մեծածավալ աշխատանք եւ ոլորտի հանրահռչակում:

Շարունակելով *«Մշակույթի զարգացման հիմնադրամի»* գործառույթների վերաբերյալ Ալֆրեդ Քոչարյանի միտքը՝ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը տեղեկացրել է, որ շուտով կներկայացվի նաեւ ժամանակակից արվեստի ոլորտում հիմնադրամի գործունեությունը: Փոխնախարարը ներկայացրել է ոլորտում իրականացվող նոր ծրագիրը՝ դրամական խրախուսում կտրամադրվի միջազգային հեղինակավոր փառատոների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին: *«Խրախուսումը կհատկացվի 1 տարով՝ ամսական շուրջ 200 հազարից մինչեւ 800 հազար ՀՀ դրամի չափով»,*- ասել է Դանիել Դանիելյանը՝ մասնավորեցնելով, որ դասակարգվել է 150 փառատոն 7 ոլորտի համար՝ երաժշտարվեստ, պարարվեստ, թատերարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ, մշակութային ժառանգություն եւ գրականություն: Ըստ նախարարի տեղակալի՝ ընտրության շատ բարձր չափանիշներ ունեցող հեղինակավոր փառատոներ կան, որոնց միայն մասնակցությունը բավական է լինելու, որպեսզի դրանց մասնակցած ՀՀ քաղաքացիները լինեն դրամական խրախուսում ստացողների ցանկում:

Նախարարի տեղակալը զուգահեռ է անցկացրել սպորտի ոլորտում հատկացվող դրամական խրախուսման հետ եւ նշել, որ մշակույթի ոլորտում դասակարգումն ու համակարգումն ավելի դժվար է: *«Մենք աշխատել ենք ոլորտային միությունների, բուհերի եւ միջազգային ֆեդերացիաների հետ, որոնք այդ փառատոներին աջակցում են եւ քաջատեղյակ են դրանցից: Այդ համագործակցությամբ ընտրել ենք 150 փառատոն. այս ցանկը կարող է ընդլայնվել եւ փոփոխվել»,*- ասել է բանախոսը՝ նշելով, որ վերջին տարիներին ասիական երկրներում եւս զարգանում է փառատոնային ոլորտը, եւ դրանց մասնակցելն ու հայկական մշակույթը ներկայացնելը եւս շատ կարեւոր է մեր երկրի համար: Ծրագրի շահառու կարող են լինել 2024 թվականի հունվարի 1-ից հեղինակավոր փառատոներին մասնակցած անձինք: Նրանք ունեն 12 ամիս ժամանակ, որպեսզի նախարարություն ներկայացնեն փառատոնին մասնակցությունը եւ գրանցած արդյունքը հավաստող հայտը եւ այդ պահից սկսած՝ 12 ամիս ստանալ դրամական խրախուսումը:

Դանիել Դանիելյանի խոսքով՝ ոլորտի գործիչների համար այս նախաձեռնությունը եղել է շատ սպասված: Այս առիթով՝ նա մատնանշել է իր հանդիպումները օպերայի եւ բալետի երիտասարդ կատարողների հետ ու արձանագրել, որ արդեն իսկ ավելացել է միջազգային մրցույթների մասնակցելու շահագրգռվածությունը: Նախարարի տեղակալը նաեւ տեղեկացրել է, որ ԿԳՄՍ նախարարությունը եւս մեկ ծրագիր ունի՝ միջազգային մրցույթների եւ փառատոների մասնակիցներին ճանապարհածախսի աջակցության տրամադրում:

Դանիել Դանիելյանը ներկայացրել է նաեւ, թե խրախուսման համակարգն ինչպես է գործելու, երբ շահառուն ոչ թե մեկ անձ է, այլ խումբ. *«Այս պարագայում գումարը տրամադրում ենք կառույցին, եւ վերջինս է որոշում՝ ինչպես բաշխել կամ ինչին հատկացնել այդ գումարը»:*

Անդրադառնալով այն հարցին, թե նախկինում տարվա կտրվածքով քանի հաջողություն է գրանցվել միջազգային փառատոներում՝ նախարարի տեղակալը նշել է, որ հաշվարկները մոտավոր են, բայց խրախուսման ծրագրի շրջանակում նախնական որոշվել է 11 տեղ հատկացնել անհատներին եւ 2 տեղ՝ խմբերին: *«Իհարկե, եթե տարվա ընթացքում ավելի շատ դափնեկիրներ ունենանք, նրանք եւս կընդգրկվեն ծրագրում»:*

Փոխնախարարը նաեւ տեղեկացրել է, որ այս պահին արդեն նախանշված է ծրագրի երկու շահառու, որոնք, սակայն, դեռ հայտը չեն ներկայացրել: Դասակարգված գումար կստանան *«Ամերիկացի»* եւ *«1489»* ֆիլմերի ստեղծագործական թիմերը:

Խոսելով Թատրոնի միջազգային օրվա մասին՝ փոխնախարարը ներկայացրել է մարտի 14-ին պաշտոնապես հայտարարված *«Թատերական շաբաթ»* ծրագիրը:

«Սա աննախադեպ իրադարձություն է, քանի որ նախկինում նմանօրինակ ծրագիր չի եղել: Մարտի 25-ից 31-ը Հայաստանի բոլոր պետական թատրոնները ներառված կլինեն այս միջոցառմանը: Ծրագրի թիրախային խումբը դպրոցականներն են. միջոցառումների մեծ մասը նախատեսվում է ցերեկվա ընթացքում: Լինելու են ընթերցումներ, վարպետաց դասեր, էքսկուրսիաներ հետնաբեմում եւ այլն: Ամեն թատրոն առաջարկում է իր ծրագիրը. անհրաժեշտ է պարզապես ծանոթանալ ծրագրի ցանկին, գրանցվել եւ մասնակցել»,- ներկայացրել է բանախոսը եւ շեշտել, որ երեխաները ծրագրին կարող են մասնակցել նաեւ ընտանիքների հետ:

Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

«Ժողովրդավարության համար քաղաքացիական կրթությունը սկզբունքային է»

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** ներկա է եղել *«Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիա»* ծրագրի պաշտոնական բացմանը նվիրված միջոցառմանը:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպան **Յապ Ֆրեդերիքսը,** ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների, երիտասարդական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, երիտասարդներ, հետազոտողներ:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի երիտասարդների շրջանում ձեւավորել ժողովրդավարության, մասնակցայնության եւ առաջնորդության հմտություններ, նրանց զինել անհրաժեշտ գիտելիքով:

Ողջունելով ներկաներին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդգծել է՝ քաղաքացիական կրթությունը պետության երիտասարդական քաղաքականության կարեւոր թիրախներից է: Այս առումով նաեւ կարեւորել է գործընկեր կառույցների հետ շարունակական համագործակցությամբ թե՛ ֆորմալ կրթության մեջ, եւ թե՛ ֆորմալ կրթությունից դուրս քաղաքացիական եւ ժողովրդավարական կարողունակության զարգացմանն ուղղված ծրագրերը:

«Հայաստանն այսօր կրթական ակտիվ բարեփոխումների փուլում է, եւ հանրակրթական նոր չափորոշչով սահմանվել է ժողովրդավարության եւ քաղաքացիական կարողունակության զարգացումը՝ որպես միջնակարգ կրթության կարողունակությունների 8 վերջնարդյունքներից մեկը: Շատ կարեւոր է, որ այս ծրագրով, արդեն ոչ ֆորմալ կրթական գործիքակազմի կիրառմամբ, այդ կարողունակությունը զարգացվի նաեւ երիտասարդների շրջանում,- ասել է ԿԳՄՍ փոխնախարարը եւ հավելել,- *պետական երիտասարդական քաղաքականության շրջանակում կան բազմաթիվ ծրագրեր ու տարբեր գործընկերներ, որոնց հետ փորձում ենք կրթական բոլոր մակարդակներում ներդնել քաղաքացիական կրթությունը եւ նպաստել որոշումների ընդունման գործընթացում երիտասարդների մասնակցության խրախուսմանը»:*

Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ միջազգային չափանիշների համաձայն՝ Հայաստանում ժողովրդավարությունը վերջին տարիներին մեծ առաջընթաց ունի: Այդուհանդերձ, ըստ փոխնախարարի, ժողովրդավարության կենսունակությունը ենթադրում է ակտիվ քաղաքացիության շարունակական գործադրում քաղաքացիների կողմից: Եվ դա հնարավոր է, եթե երիտասարդներն ունենան համապատասխան հմտություններ ու գիտելիք, ինչին էլ միտված է *«Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիա»* ծրագիրը:

Արթուր Մարտիրոսյանը շնորհավորել է մասնակիցներին եւ շնորհակալություն է հայտնել դեսպանությանը եւ ներգրավված բոլոր կառույցներին՝ հույս հայտնելով, որ նմանատիպ ծրագրերը կդառնան շարունակական:

Նշենք, որ ծրագիրը ֆինանսավորում է Նիդերլանդների կառավարությունը, իրականացնում են *«ՕքսԵՋեն»* հիմնադրամն ու Նիդերլանդների բազմակուսակցական ժողովրդավարության ինստիտուտը (NIMD):

Միջոցառման ընթացքում ներկայացվել են ծրագրի հիմնական նպատակները, բաղադրիչները, ակնկալվող արդյունքները եւ համագործակցության հնարավորությունները:

«Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի» մասնակիցները պանելային քննարկմամբ անդրադարձել են երիտասարդների համար երկխոսության հարթակների դերին՝ Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման համատեքստում:

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

Դուալ համակարգի ներդրման շուրջ

Հարցազրույց Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Արգամ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ հետ

- Ի՞նչ առանցքային փոփոխություններ է բերել դուալ համակարգի ներդրումը Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում:

- Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում դուալ կրթական համակարգը ներդրվել է 2018 թվականի «Գինեգործություն» մասնագիտության համար: Բավականին մեծ ջանք ու էներգիա ներդրվեց Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ), «Անուշավան եւ Օֆիկ Աբրահամյան» կրթական հիմնադրամի, ինչպես նաեւ մասնավոր հատվածի էնտուզիաստների կողմից՝ դուալ կրթության փորձարարական ծրագիրը ստեղծելու համար: Դուալ կրթական համակարգի կիրառումը նոր համագործակցության եւ զարգացման հորիզոններ բացեց քոլեջի համար՝ հնարավորություն ստեղծելով թեեւ հնագույն, բայց մեզ համար նորարարական մոտեցումներով իրականացնել մասնագիտական կրթություն: Այն նաեւ լավ հնարավորություն էր՝ ներգրավվել միջազգային զարգացման տարբեր նախագծերի մեջ, օրինակ՝ Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից գերազանցության կենտրոնների ստեղծման եւ համակարգման գործընթացը կամ նոր լաբորատորիաների եւ կենտրոնների հիմնադրման ծրագրերը: Այս ամենը հիմք դրեց առանց ցնցումների փոփոխություններ կատարելու եւ առանց վարանելու նորարարություններ ծեռնարկելու մշակույթի ծեւավորմանը աշխատակիցների, գործընկերների եւ այլ շահառուների շրջանակում:

- Ինչպիսի՞ն է դուալ կրթության արդյունքում բիզնեսի հետ ծեւավորված համագործակցությունը:

- Դուալ կրթության կիրառումը որոշ չափով լուծեց ՄԿՈՒ ոլորտում մասնավոր հատվածի ներգրավվածության խնդիրը՝ քոլեջի եւ նրա շրջանավարտների դերը կարեւորելով աշխատաշուկայու եւ հնարավորություն ստեղծելով համագործակցել մասնավոր հատվածի այն ներկայացուցիչների հետ, որոնք իրենց ոլորտում մշակույթ ստեղծող, պահպանող եւ արժեքներ կրող են: Այդ համագործակցության շնորհիվ ավելի հեշտացավ կրթական ծրագրերը մասնավորի հետ քննարկելու եւ պարբերաբար թարմացնելու գործընթացը՝ ավելի արդյունավետ դարձնելով այն, իսկ մասնավոր հատվածի համար քոլեջը դարձավ մասնագիտական, տեղեկատվական եւ աշխատաշուկայի որոշ խնդիրներ քննարկելու եւ լուծելու հենարան: Դրա ապացույցն է վերջին 2 տարվա մեջ 4 հիմնական նոր գործընկերների առկայությունը. հատկապես կնշեի այն փաստը, որ նրանց նախաձեռնությունն է եղել համագործակցելը քոլեջի հետ:

- Իսկ ինչպիսի՞ն է շրջանավարտների զբաղվածության աստիճանը եւ աշխատանքի տեղավորման հնարավորությունը:

- Այս պահին մարզում կառուցվում են նոր մեծ գործարաններ, որոնց հետ կա համագործակցելու նախնական պայմանավորվածություն: Համագործակցող կառույցների եւ՝ քանակական, եւ՝ ծավալային ընդլայնումը, բնականաբար, կբերի զբաղվածության եւ աշխատանքի տեղավորման աճի: Կարեւորում եմ նաեւ այն, որ համագործակցության արդյունքում աշխատանքի են ընդունվում ոչ միայն դուալ կրթության շրջանակում ուսումնառած, այլ նաեւ, օրինակ, «Հաշվապահական հաշվառում», «Զբոսաշրջություն», «Խոհարարական գործ» մասնագիտությունների շրջանավարտները: Հետեւաբար՝ համագործակցությունը զուտ աշխատանքի տեղավորվածների թվի տեսքով այլ տեսք ունի, իսկ դուալ կրթությունով ուսումնառածների՝ մեկ այլ: Հարկավոր է նշել, որ նշված մասնագիտությունների գծով պրակտիկաների իրականացման վայրերի խնդիր այլեւս չունենք:

- Ի՞նչ նոր մասնագիտություններ են ներդրվել ուսհաստատությունում դուալ կրթական համակարգով:

- Նոր մասնագիտությունների ներդրումը կասեցվել է, քանի որ քոլեջը հավատարմագրվել է պայմանական 2 տարով, իսկ այդ դեպքում, ըստ կարգի, ուսումնական հաստատությունը զրկվում է նոր մասնագիտություն բացելու իրավունքից 2 տարով: Այդ իսկ պատճառով հնարավորություն չունենք շարժվելու այն գործողությունների պլանով, որը մշակվել է 2021թ.-ին ETF-ի կողմից գերազանցության կենտրոնների հիմնման եւ զարգացման ծրագրերի շրջանակում:

- Ի՞նչ խնդիրներ են ծագել դուալի ներդրման եւ հետագա գործընթացների ընթացքում:

- Դուալ կրթական ծրագիրը ներդրվել է՝ ուսումնասիրելով եւ տեղայնացնելով գերմանական գործընկերների փորձը: Գերմանիայում 200 տարի կիրառելով այս համակարգը՝ դեռեւս խնդիրների լիարժեք եւ վերջնական լուծման չեն հանգել, քանի որ յուրաքանչյուր մասնագիտություն, տարածաշրջան կամ ուսումնական հաստատության ռազմավարություն ունի իրեն բնորոշ զարգացման ընթացքը, խնդիրները եւ դրանց լուծման ուրույն ուղիները: Մեզ մոտ առաջացած խնդիրները հիմնականում տեխնիկական են, օրինակ՝ ուսանողների տեղաշարժը դեպի տարբեր գործարաններ, որոնք տեղակայված են տարբեր համայնքներում, կամ սեզոնայնությունը եւ այլն: Հիմնական խնդիրներից է նաեւ մասնավոր հատվածում մասնագետների գերզբաղվածությունը, որի պատճառով որոշ կազմակերպություններ չեն կարողանում ընդգրկվել դուալ համակարգի կիրառման գործում:

- Որո՞նք են դուալի հեռանկարի վերաբերյալ Ձեր գնահատականները եւ ի՞նչ կտա այն ուսումնական հաստատությանը:

- Կարճ ժամանակահատվածում բոլոր շահառուների հետ համագործակցության ընդլայնումն արդեն իսկ դրական գնահատական է եւ՝ համակարգի կիրառման գործընթացի, եւ՝ նրա արդյունավետության համար: Փորձարարական դուալ համակարգի արդյունավետ կիրառումը քոլեջի զարգացման ընթացքը հասցրել է նոր գաղափարների մշակման եւ այն ավելի ընդլայնված կիրառելու մի նոր փուլի, որը աշխատանքի հիման վրա ուսուցման ավելի ընդլայնված գործընթաց կլինի եւ հնարավորություն կտա միանգամից ներգրավել մեկից ավել մասնագիտություններ: Ավելի մանրամասն դրա մասին կխոսվի ծրագրի հստակեցումից եւ որոշ մեկնարկային քայլեր իրականացնելուց հետո: Կարող եմ միայն որոշ չափով բացել փակագծերը՝ նկարագրելով մի կենտրոն, որտեղ միավորված ուսանումաշխատում են տուրիզմի, գինեգործության եւ խոհարարության ուսանողներ՝ ունենալով իրենց համար հատկացված մի համալիր, որտեղ տերերը զարգացնողները եւ որոշ չափով տնօրինողները հենց իրենք կլինեն: Տնտեսության եւ տարածաշրջանի աշխատաշուկայի սահմանափակ հնարավորությունների պարագայում սա կրթության մի նոր ակտիվ միջավայր կլինի՝ նոր հնարավորություններով ու հորիզոններով:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համակարգ

Հաստատվել է նախագծային ուսուցման հայեցակարգը եւ ուսուցիչների վերապատրաստման մոդուլը

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է *«Նախագծային ուսուցման հայեցակարգը եւ ուսուցիչների վերապատրաստման մոդուլը»:*

Նախագծային ուսուցման առավելություններն են՝

Սովորողները սովորում են սովորել. նախագծերը խրախուսում են սովորողներին խորությամբ աշխատել խնդրի վրա, ներգրավվել հստակ ժամանակացույցի կազմման աշխատանքներում, ինչը ձեւավորում է ինքնահսկողություն եւ պատասխանատվություն:

Ուսուցում ողջ կյանքի ընթացքում. նախագծերի իրականացումը սովորողներին տալիս է այնպիսի գիտելիքի եւ փորձի ձեռքբերում, որը կիրառելի է նաեւ հետագա կյանքի ընթացքում եւ չի սահմանափակվում դասագրքից սովորելու պարզունակ ճանապարհով:

Ակտիվ ուսուցում. լավ մշակված ուսումնական նախագծում սովորողներն աշխատում են առավել գործնականգ նրանք տեղեկատվություն են հավաքում տարբեր աղբյուրներից, հետազոտում, ստեղծում արդյունք, փորձարկում: Սովորողներն առաջ են քաշում իրենց մտքերը եւ խնդրի լուծմանն ուղղված իրենց պատկերացումները, ինչպես նաեւ սովորում են որոշումներ կայացնել, հիմնավորել եւ պաշտպանել իրենց տեսակետը քննարկումների ժամանակ:

Համագործակցային ուսուցում. խրախուսում է սովորողների ակտիվ ներգրավվածությունն ու մասնակցությունը ուսումնական գործընթացում, ինչպես նաեւ սովորողների մոտ ձեւավորվում թիմային աշխատանքի, ինչպես նաեւ ընդհանուր պատասխանատվության գիտակցում:

Ուսումնական նախագծերն իրականացվում են՝ հանրակրթության պետքկան չափորոշչի պահանջներին համապատասխան՝ 7-12-րդ դասարաններում: Սովորողի կողմից ուսումնական նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ ուսումնական առարկայի շրջանակում, այնպես էլ տարբեր առարկաներից՝ հետազոտության մեթոդների համադրմամբ միեւնույն օբյեկտի եւ երեւույթի, օրինաչափությունների կամ առանձնահատկությունների վերաբերյալ տվյալների հավաքման, համադրման, վերլուծության շրջանակում:

Ուսումնական նախագծերի համար սահմանվել են հետեւյալ հիմնական պահանջները.

- Ուսումնական նախագիծը պետք է ունենա առարկայական ծրագրերի թեմատիկ բովանդակությունից բխող նպատակ, նկարագիր, պլանավորված գործողություններ, ակնկալվող վերջնարդյունք, կանխորոշված տեւողություն, կիրառվելիք ՏՏ գործիքներ, հնարավոր հետագա ազդեցություն եւ վերջնարդյունքի կիրառելիություն:

- Ուսումնական նախագիծը պետք է լինի գործողությունների ամբողջություն, հստակ պլանավորվի եւ իրականացվի այնպես, որ նախագծի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները եւ կարողություններն աջակցեն առարկաների ծրագրերի թեմատիկ բովանդակության յուրացմանը:

- Ուսումնական նախագծերը պետք է լինեն համագործակցային, այսինքն՝ աշխատանքներին ցանկալի է մասնակցեն մեկից ավելի սովորողների խմբեր:

- 7-12–րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները պետք է ծանոթ լինեն նախագծային ուսուցման մեթոդաբանությանը եւ ունենան տվյալ առարկայի թեմատիկ բովանդակությունից բխող ուսումնական նախագծի թեմայի առաջարկ: Այդ դասարաններում դասավանդող ուսուցիչը չի կարող հրաժարվել ուսումնական նախագիծ իրականացնելուց, եթե սովորողներն ընտրել են իր դասավանդած առարկան:

- Յուրաքանչյուր ուսումնական նախագծում միեւնույն ուսումնական հաստատությունից կարող են ներգրավվել առավելագույնը 12 սովորողներ:

- Սովորողների խմբերը կարող են ներկայացնել ինչպես միեւնույն ուսումնական հաստատությունը, այնպես էլ ՀՀ մեկից ավելի հաստատություններ:

- Դասավանդողները ներկայացնում են ուսումնական նախագծի պլանը համապատասխան մասնագիտական հանձնախմբին, որը քննարկում եւ հավանություն է տալիս՝ համաձայն սահմանված չափանիշների: Ընդ որում, եթե որեւէ չափանիշով պլանը գնահատվում է անբավարար, ապա այդ նախագիծը չի կարող հաստատվել:

- Կախված բարդությունից՝ ուսումնական նախագիծը պետք է առնվազն ունենա 4 շաբաթ եւ 6 դասաժամ տեւողություն՝ հստակ պլանավորված փուլերով:

- Ուսումնական նախագծին մասնակցող բոլոր սովորողները յուրաքանչյուր փուլի համար պետք է ունենան հստակ աշխատանքային բաժանում՝ անհատապես կամ խմբային աշխատանքի շրջանակում, ինչպես նաեւ, սովորողներն անհատապես կամ խմբերով պետք է ինքնուրույն իրականացնեն գործնական, հետազոտական եւ վերլուծական աշխատանք:

- Ուսումնական նախագծի արդյունքում պետք է ստեղծվի յուրօրինակ նյութական կամ ոչ նյութական արժեք, որը կիրառելի կլինի այն խնդրի լուծման համար, ինչի շուրջ պլանավորվել եւ իրականացվել է տվյալ նախագիծը:

- Ուսումնական նախագծերի պլանավորումը, իրականացումը եւ վերջնարդյունքների հրապարակումը պետք է կատարվի որեւէ առցանց համագործակցային միջավայրում:

Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջնախաղ՝ Վրաստանում

ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Վրաստանում Հայաստանի եւ Ֆրանսիայի դեսպանությունների, Ֆրանսիական ինստիտուտի աջակցությամբ Թբիլիսիի *«Ռուսթավելի»* թատրոնում կայացել է Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված՝ *«Նռան գույնը»* հայ-ֆրանսիական պարային բեմադրության առաջնախաղը:

Ներկայացմանը հետեւել են դեսպանները, դիվանագետներ, բարձրաստիճան պաշտոնյաներ:

«Նռան գույնը» ներկայացումը ջերմ ընդունելություն է գտել հանդիսատեսի կողմից՝ արժանանալով բուռն ծափերի:

Բեմադրության հեղինակը Ֆրանսիայում հայտնի պարուսույց **Մուրադ Մերզուկին** է: Գաղափարի հեղինակը Ֆրանսիայում գործող *«Սաթէ-Աթոը»* թատերական միության գեղարվեստական ղեկավար **Սաթէ Խաչատրյանն** է: Բեմադրության երաժշտությունը գրել է *«Հող արթուն»* խումբը, իսկ բեմական հագուստների ձեւավորումն իրականացրել է **Էդգար Մանուկյանը:** Ներկայացմանը ներգրավված յոթ պարողներից երկուսը հրավիրված են Հայաստանի Հանրապետությունից:

Լավրենտի ՄԻՐԶՈՅԱՆ



Կյանքի 74-րդ տարում իր մահկանացուն կնքեց անվանի լեզվաբան, մանկավարժ, մայրենիի նվիրյալ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Լավրենտի Աշոտի Միրզոյանը:

Լ. Միրզոյանը ծնվել է 1950 թվականի մայիսի 22-ին, ՀՀ Տավուշի մարզի Չորաթան գյուղում, ծառայողի ընտանիքում:

1967-ին գերազանցությամբ ավարտել է Ներքին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոցը, ապա՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը, Մոսկվայի կոմերիտական բարձրագույն դպրոցը, 2000-ին՝ Մեծ Բրիտանիայի զարգացման գործակալության քաղաքացիական ծառայողների դասընթացները:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Երեւանի պետական համալսարանում՝ որպես *«Երեւանի համալսարան»* թերթի պատասխանատու քարտուղար: Այնուհետեւ աշխատել է հանրապետական մամուլում եւ հեռուստատեսությունում. 1975-1980թթ.՝ *«Պիոներական»* թերթի բաժնի վարիչ, 1980-1981թթ.՝ *«Սովետական Հայաստան»* թերթի թղթակից, 1981-1987թթ.՝ *«Ավանգարդ»* թերթի պատասխանատու քարտուղար, 1987-1990թթ.՝ *«Հայոց լեզուն եւ գրականությունը դպրոցում»* ամսագրի գլխավոր խմբագիր, 1990-1993թթ.՝ Հեռուստառադիոպետկոմի ինֆորմացիայի գլխավոր խմբագրության գլխավոր խմբագրի տեղակալ:

1990 թվականին ընտրվել է Երեւանի քաղաքային խորհրդի պատգամավոր, եղել է մշակույթի, լրատվության, լեզվի հանձնաժողովի նախագահ: 1996 թվականին ընտրվել է Երեւանի էրեբունու համայնքի ավագանու անդամ:

1999-2004 թվականներին եղել է ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության Հրատարակչական գործի գործակալության պետի տեղակալ:

2004թ. մայիսին նշանակվել է ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ:

2010-2011 թվականներին եղել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր, 2011-2012 թվականներին ղեկավարել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշատակազմը:

Տարբեր տարիների հիմնադրել եւ խմբագրել է *«Հայ աշխարհ»*, *«Համայնք»*, *«Էրեբունի»*, *«Քաղաքացիական ծառայություն»* թերթերը, *«Հանրային կառավարում»* հանդեսը, *«Պետական ծառայություն»* հրատարակչությունը:

Երկար տարիներ դասախոսել է հանրապետության բուհերում, վերջին տարիներին՝ հիմնականում Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում եւ ՀՀ Կառավարման պետական ակադեմիայում, դասավանդել *«Հայ մամուլի պատմություն»*, *«Ժամանակակից հայոց լեզու»*, *«Հայոց լեզվի մեթոդիկա»*, *«Գրաբար»*, *«ՀՀ պետական եւ պաշտոնական լեզու»* առարկաները:

26 գիտական, մշակութային գրքերի, հանրագիտարանային հրատարակությունների հեղինակ է (*«Առձեռն մայրենի»*, *«Սխալ եւ ճիշտ»*, *«Ուղղագրական, հոմանիշների, դարձվածաբանական դպրոցական բառգիրք»*, *«Գրպանի ուղղագրական բառարան»*, *«Արդի հայերենի բառարան»*, *«Երեւան»*, *«Տավուշ»*, *«Տավշո արմատներ»*, *«Գանձեր»*, *«Չորաթան»* եւ այլն):

Մանկավարժական գիտությունների թեկնածու էր, դոցենտ, ՀՀ մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Թարգմանվել է 8 լեզվով, հեղինակ է շուրջ երեք հազար հրապարակումների: Խմբագրել է ՀՀ Ազգային ատլասը (2 հատոր), ԼՂՀ ատլասը, Երեւանի վարչատերիտորիալ բաժանման ատլասը, Տերմինաբանական ուղղագրական տեղեկատուն:

Պարգեւատրվել է ՀՀ ԿԳՆ *«Ոսկե»*, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության *«Ոսկե»*, ՀՀ ՊԿ ակադեմիայի *«Ոսկե»*, *«Արվեստագետ»* կրթամշակութային միության *«Ոսկե»*, *«Ֆրիտյոֆ Նանսեն»* միջազգային հիմնադրամի *«Ոսկե»* հուշամեդալներով, Արցախի *«Երախտագիտություն»* պետական, ՀՀ ՊՆ *«Գարեգին Նժդեհ»*, ՀՀ ազգային գրադարանի *«Հակոբ Մեղապարտ»* մեդալներով, բազմաթիվ պատվոգրերով, շնորհակալագրերով: 2023թ. ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է *«Մովսես Խորենացի»* մեդալի:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ, 6 թոռ:

Անվանի մտավորականի, անխոնջ լեզվաբանի, մայրենիի նվիրյալի՝ նրա հիշատակը միշտ վառ կմնա բոլոր ճանաչողների սրտերում:

Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Դասավանդման իմ փորձից

Գրաֆիկական թելադրությունների եւ Պյութագորասի աղյուսակի կիրառումը տարրական դասարանի մաթեմատիկայի դասերին

Մաթեմատիկայի ուսուցումը կրտսեր դպրոցում սովորողների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետեւողական գործընթաց է: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս պետք է հիշել, որ սովորողներն առավել հաճախ հիշում ու մտապահում են այն ամենը, ինչն ավելի կիրառական է եւ այս կամ այն կերպ ազդում է նրա զգայարանների վրա՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, ուստի գրաֆիկական առաջադրանքների միջոցով ուսուցումը կնպաստի սովորողների մոտ կայուն մաթեմատիկական գիտելիքների ձեւավորմանը, գործնական, համագործակցային կարողությունների զարգացմանը: Նոր չափորոշիչներով պայմանավորված՝ գրաֆիկական հմտությունների զարգացումը կօգնի խրախուսել սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, սեփական հնարավորությունները ճանաչելու եւ զարգացնելու կարողությունը, ստեղծագործական, տրամաբանական, քննադատական մտածողության ձեւավորումը:

Մաթեմատիկայի դասը դինամիկ եւ շարժուն դարձնելու նպատակով, դասին ոգեւորություն հաղորդելու համար, ինչպես նաեւ սովորողների մոտ ձանձրույթը կանխելու նպատակով առաջարկում եմ օգտվել գրաֆիկական թելադրություններից եւ Պյութագորասի աղյուսակից: Պյութագորասի աղյուսակի եւ գրաֆիկական թելադրությունների կիրառումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասաժամերին ապահովում է կրտսեր դպրոցականների մաթեմատիկական մտածողության զարգացումը: Այս հնարները թույլ են տալիս բարձրացնել մաթեմատիկա առարկայի արդյունավետությունը, ապահովում են սովորողների պատկերավոր, տրամաբանական, քննադատական մտածողությունը, մանր մոտորիկայի զարգացումը, ինչպես նաեւ մոտիվացնում են: Գրաֆիկական հմտությունների միջոցով սովորողների մոտ ձեւավորվում ու զարգանում են ճանաչողական գործընթացները, ուշադրությունը, հիշողությունը, վերլուծելու հմտությունները, զարգանում է ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, որոշում կայացնելու կարողությունը: Սովորողներն այս տեխնոլոգիաների շնորհիվ՝ հնարավորություն են ստանում գրքային գիտելիքից բացի ստանալ ավելի լայն հնարավորություններ, այդ թվում՝ սեփական հմտություններն ու կարողությունները այլընտրանքային միջավայրում իրացնելու:

Գրաֆիկական թելադրություններն ու Պյութագորասի աղյուսակը իրենց մեջ պարունակում են նաեւ խաղային տեխնոլոգիաների բաղադրիչներ, ուստի եւ մեծ հետաքրքրություն ու ոգեւորություն են առաջացնում սովորողների մոտ՝ հաշվի առնելով վերջիններիս տարիքային առանձնահատկությունները: Այս հնարների օգնությամբ հիմնականում բացառվում են սթրեսային իրավիճակները առարկայի նկատմամբ, ընկճվածությունը, դժվարությունները հաղթահարվում են փոխօգնության մթնոլորտում:

«Գրաֆիկական թելադրություններ»

Գրաֆիկական թելադրությունները մեթոդական այնպիսի մանկավարժական լուծումներ են, որոնք սովորողների մոտ առաջացնում են հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ, ձեւավորում են տրամաբանական մտածողություն: Դրանց միջոցով զարգանում է ուշադրությունը, լսելու կարողությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը, ժամանակն արդյունավետ օգտագործելու կարողությունը: Այս թելադրությունները կիրառվում են դեռեւս նախադպրոցական տարիքում եւ իրենց շարունակությունն են գտնում տարրական դպրոցում՝ նպատակ ունենալով դասի ընթացքում զարգացնել սովորողների մանր մոտորիկան:

Սովորողները, առաջին դասարանում սովորելով, շարունակում են ամրապնդել եւ զարգացնել դեռեւս նախադպրոցական տարիքից ձեռք բերած կարողությունները: Սովորողները ձեռք են բերում տարածականության պատկերացումներ, ներմուծվում է թվի հասկացության գաղափարը, պատկերացում են կազմում հարթության վրա եւ տարածության մեջ առարկաների դասավորվածությանը, օգտագործում են *«վերեւ, ներքեւ», «առաջ, ետ», «աջ, ձախ», «բարձր, ցածր»* եւ այլ հասկացություններ: Այս հասկացությունների ամրապնդման եւ գործնական կիրառմանը մեծապես օգնում են գրաֆիկական թելադրությունները:

Գրաֆիկական թելադրությունները սկսում ենք պարզից բարդ սկզբունքով: Սկզբնական շրջանում սովորողներին բացատրվում է դրանց կատարման քայլաշարը, ներկայացվում անհրաժեշտ գրենական պիտույքները՝ վանդակավոր թուղթ, ռետին, գծագրական մատիտ: Աշխատանքի ընթացքում հաջողություններ գրանցելու համար սովորողները պետք է ուշադիր լսեն ուսուցչի հրահանգները եւ նույնությամբ կատարեն դրանք, պահպանեն լռություն, անտեղի չընդհատեն գործընթացը, սխալվելու դեպքում ռետինով մաքրեն եւ կրկին կատարեն քայլը: Աշխատանքի ավարտից հետո խրախուսում ենք սովորողներին, ոգեւորում, առաջարկում կատարել գունազարդում: Ինքնուրույն, ճիշտ կատարված աշխատանքը ոգեւորում է սովորողներին, եւ նրանք անհամբեր սպասում են հաջորդ գրաֆիկական թելադրությանը: Իսկ այն սովորողներին, ում մոտ չի ստացվել, օգնում ենք հասկանալ սխալները, սովորեցնում ենք չհուսահատվել, կրկին փորձել: Գրաֆիկական թելադրությունների սկզբում սովորողներին կարելի է առաջարկել տվյալ նկարի վերաբերյալ հանելուկ, որը ավելի կոգեւորի սովորողներին, եւ նրանք նախօրոք պատկերացում կունենան, թե ինչ է ստացվելու գրաֆիկական թելադրության ավարտին: Այդ հանելուկները կարելի է նաեւ գրաֆիկական թելադրության ընթացքում առաջարկել սովորողներին, ինչը ոչ պակաս ոգեւորություն կհաղորդի աշխատանքին:

Առաջադրանքի համար պատրաստված վանդակավոր թղթի վրա մենք պետք է նշենք շարժման սկիզբը կետի տեսքով: Սկզբնական փուլում այն կարող է մատուցվել մանկավարժի կողմից: Հետագայում մենք կարող ենք սովորողին խնդրել դա անել ինքնուրույն՝ թերթիկի եզրից հետ կանգնելով որոշակի թվով բջիջներ այս կամ այն ուղղությամբ:

Երբ սկսում ենք թելադրել, չենք կարող այլ բառեր արտասանել: Եվ նույնիսկ ավելին, կրկնել նույն ուղղությունը երկու անգամ:

Առաջին անգամ կարող ենք սովորողների հետ նկարել գրատախտակին, որպեսզի նրանք տեսնեն, թե ինչպես պետք է աշխատեն, որից հետո սովորողները կկարողանան կատարել հետագա թելադրությունները՝ առանց հուշելու:

Համեմատաբար պարզ են համարվում հետեւյալ գրաֆիկական թելադրությունները՝





Այն ժամանակ, երբ դասարանում բոլորի մոտ ստացվում են պարզ գրաֆիկական թելադրությունները, սովորողներին առաջարկում ենք համեմատաբար ավելի բարդ թելադրություններ՝







Սովորողների մոտ այս հմտություններն առավել զարգացնելու նպատակով նրանց կառաջարկվի գրաֆիկական թելադրությունը ինքնուրույն գրել՝ ըստ տրված քայլաշարերի: Սրանք բարդ մակարդակի, ծավալուն առաջադրանքներով թելադրություններ են, որոնք պահանջում են բարդ հաշվարկներ, երկար գծեր եւ անկյունագծային շարժումներ:





Գրաֆիկական թելադրության տեխնիկայի միջոցով կարող ենք բացահայտել, թե որքան լավ է երեխան զարգացրել կողմնորոշումը տարածության մեջ, ուշադիր է, թե ոչ, ուսուցչի առաջարկած հրահանգները լսելու եւ ճշգրիտ հետեւելու կարողություն ունի, թե ոչ:

«Պյութագորասի աղյուսակ»

Պյութագորասի աղյուսակի միջոցով սովորողների մոտ խորացվում են գիտելիքները, կարողանում են գործնականում կիրառել գիտելիքները, ինքնուրույն մտածել, խոչընդոտներն ու դժվարությունները հեշտությամբ հաղթահարել: Կրտսեր դպրոցականներին տալիս են մաթեմատիկական հիմնական գիտելիքներ, ձեւավորում նրանց մեջ լեզվատրամաբանական եւ ալգորիթմական մտածողություն, թվաբանական գիտելիքներ եւ մեթոդներ, դրանք գործնական իրադրություններում կիրառելու կարողություններ: Այն խթանում է ուշադրությունն ու հիշողությունը, սերմանում է աշխատասիրություն, հանդուրժողականություն, նպատակասլացություն, համբերության զարգացում: Շատ կարեւոր է, որ գործընթացը չկրի մեխանիկական բնույթ, այսինքն՝ սովորողը հասկանա, թե տվյալ աշխատանքի արդյունքում ինքը ինչ նոր հմտություններ ու կարողություններ ձեռք կբերի եւ որքանով են դրանք իրեն անհրաժեշտ: Երբ սովորողը պատկերացնի աշխատանքի բնույթը, նպատակն ու խնդիրը, այս պարագայում առավել գիտակցված եւ պատասխանատու կմոտենա տվյալ առաջադրանքին: Պյութագորասի աղյուսակը կարելի է կիրառել տարբեր նպատակներով՝ բազմապատկման աղյուսակի ամրապնդման, 20-ի սահմանում կարգային անցումով թվերի գումարման ամրապնդման, թիվը մի քանի միավորով մեծացնելուն եւ այլ թեմաների վերաբերյալ: Յուրաքանչյուր դասարանում հարմարեցնում ենք համապատասխան թեմաներին եւ փոխում ենք թվերը:

շարունակությունը էջ 7

Մշակույթ

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը** ներկա է եղել Արամ Խաչատրյան համերգասրահում աուդիո եւ ձայնագրման սարքավորումների բարելավման ծրագրի մեկնարկի արարողությանը:

Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրել են Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի տնօրեն **Նորայր Նազարյանը** եւ ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան **Աոկի Յուտական:**

Ողջունելով ներկաներին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նախարարության անունից շնորհակալություն է հայտնել Ճապոնիայի կառավարությանը՝ անչափ կարեւոր նախաձեռնության համար: Նախարարի տեղակալը շնորհակալություն է հայտնել նաեւ դեսպան Աոկի Յուտականին՝ իր գործունեությամբ մշակութային կառույցներին աջակցելու համար:

«Ուրախ ենք, որ այսպիսի նախաձեռնությունը գալիս է մի երկրից, որտեղ արդի տեխնոլոգիաների որակը շատ բարձր է, եւ որի շնորհիվ մենք ձեռք ենք բերում բարձրակարգ տեխնիկա: Այս տեխնիկան կծառայի ոչ միայն ֆիլհարմոնիկ նվագախմբին, այլեւ հայաստանյան եւ արտերկրի այն նվագախմբերին, երաժշտական խմբերին, որոնք ելույթներ կունենան Արամ Խաչատրյան համերգասրահում: Անդրադառնալով թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելին՝ նշեմ, որ ունենք շատ լավ օրինակ. պետական հատկացումների, մասնավոր եւ արտերկրի աջակցությունների շնորհիվ ֆիլհարմոնիկ նվագախմբի տնօրինության նախաձեռնողականության արդյունքում վերանորոգվել է համերգասրահի դահլիճը: Այս դրամաշնորհի արդյունքում Արամ Խաչատրյան համերգասրահի դահլիճը կվերազինվի արդի տեխնիկայով՝ միջազգային ստանդարտներին համապատասխան: Ծրագրի նպատակն է Արամ Խաչատրյան համերգասրահը վերածել բարձրորակ, տեխնիկապես հագեցած մշակութային հարթակի, որտեղ հնարավոր կլինի իրականացնել նաեւ բարձրորակ ձայնագրություններ եւ հեռարձակումներ: Ճապոնական կառավարության տրամադրած այս միջոցները լավագույնս կծառայեն բարձրակարգ համերգների, միջոցառումների, ձայնագրությունների իրականացմանը»,- նշել է Դանիել Դանիելյանը եւ մաղթել ծրագրի հաջող իրականացում:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի տնօրեն Նորայր Նազարյանի տեղեկացմամբ՝ մինչեւ 72,000 ԱՄՆ դոլար կազմող դրամաշնորհն ուղղվելու է Արամ Խաչատրյան համերգասրահում աուդիո եւ ձայնագրման սարքավորումների բարելավման ծրագրին. *«Ձեռք են բերվելու աուդիո եւ ձայնագրման ոլորտում աշխարհի առաջատար ճապոնական YAMAHA ընկերության CL1 եւ DM7 ձայնակառավարման 2 վահանակ: Այս գերժամանակակից սարքավորումները թույլ կտան Արամ Խաչատրյան համերգասրահում իրականացնել որակյալ համերգներ, որոնք պահանջում են ձայնի տեխնիկական լավ վերարտադրություն, միջազգային ստանդարտների համապատասխան ձայնագրություններ (CL1) եւ համերգների ուղիղ հեռարձակումներ (DM7)»,-* ասել է Նորայր Նազարյանը եւ հավելել, որ վերջին անգամ Արամ Խաչատրյան համերգասրահի համար աուդիո եւ ձայնագրման սարքավորումներ են ձեռք բերվել 25 տարի առաջ՝ 1999 թվականին, կրկին Ճապոնիայի կառավարության դրամաշնորհային աջակցության շրջանակում:

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Աոկի Յուտական նշել է, որ կարճ ժամանակահատվածում արդեն զգացել է հայ ժողովրդի բարեկամական վերաբերմունքն ու հյուրընկալությունը, նկատել նաեւ, որ երկու երկրները՝ Հայաստանն ու Ճապոնիան, շատ նմանություններ ունեն. *«Երկուսն էլ փոքր երկիր են՝ հարուստ երկար պատմությամբ, ավանդույթներով եւ հնագույն մշակույթով, եւ կիսում են սերը երաժշտության հանդեպ: Ծրագիրը հնարավորություն կտա այս գեղեցիկ համերգասրահում ելույթ ունեցող Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին եւ այլ նվագախմբերին ու անհատ երաժիշտներին ձայնագրել եւ հեռարձակել համերգները շատ ավելի բարձր որակով, նոր եւ ժամանակակից սարքավորումներով, որոնք ձեռք են բերվելու այս աջակցության միջոցով: Հայաստանը հայտնի է իր պատմականորեն հարուստ երաժշտական մշակույթով, որը ստեղծել է այնպիսի հանրահռչակ երաժիշտներ եւ երգահաններ, ինչպիսիք են Կոմիտասը, Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը եւ շատ ուրիշներ: Մեր նպատակն է՝ պահպանել եւ փոխանցել այս ահռելի երաժշտական ժառանգությունը հաջորդ սերունդներին: Վստահ եմ, որ նոր ծրագրի միջոցով մենք կարող ենք նպաստել այս կարեւոր առաքելությանը, որպեսզի մարդիկ կարողանան վայելել այն գլուխգործոցները, որոնք կկատարվեն Արամ Խաչատրյան համերգասրահում ճապոնական սարքավորումների եւ Հայաստանի, ինչպես նաեւ ամբողջ աշխարհի աշխարհահռչակ երաժիշտների ստեղծագործությունների համադրմամբ»:*

Գրաֆիկական թելադրությունների եւ Պյութագորասի աղյուսակի կիրառումը տարրական դասարանի մաթեմատիկայի դասերին

սկիզբը՝ էջ 6

Այն կարելի է օգտագործել դատարկ՝ միայն եզրային թվերը գրելով կամ ամբողջ աղյուսակը լրացրած:

+	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

+	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	4	5	6	7	8	9	10	11	12	13
4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7	8	9	10	11	12	13	14	15	16	17
8	9	10	11	12	13	14	15	16	17	18
9	10	11	12	13	14	15	16	17	18	19
10	11	12	13	14	15	16	17	18	19	20

Նույնը՝ բազմապատկման դեպքում, գումարման նշանը փոխարինում ենք բազմապատկման նշանով:

Մեր խնդիրն է՝ օգնել սովորողին խաղային ձեւով տիրապետել լավ սովորելու համար անհրաժեշտ հմտություններին: Ուստի անհրաժեշտ չէ նախատել սովորողին: Եթե ինչ-որ բան նրա մոտ չի ստացվում, պարզապես բացատրեք, թե ինչպես դա անել ճիշտ: Ավելի հաճախ գովեք ձեր սովորողներին եւ երբեք մի համեմատեք նրան որեւէ մեկի հետ:

Առաջադրանքները ճիշտ կատարելու դեպքում սովորողների մոտ ստացվում են տարբեր պատկերներ, ինչը նրանց մեծ ոգեւորություն եւ ուրախություն է պարգեւում: Այս աղյուսակների միջոցով ապահովվում է դասի մոտիվացիան, դինամիկան: Սրանց միջոցով կարող ենք ստուգել նաեւ մեր առջեւ դրված վերջնարդյունքները:

Ճիշտ լուծված Պյութագորասի աղյուսակի օրինակներ՝

+	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2	3	4	5	6	7	8	9	10	11	12
3	4	5	6	7	8	9	10	11	12	13
4	5	6	7	8	9	10	11	12	13	14
5	6	7	8	9	10	11	12	13	14	15
6	7	8	9	10	11	12	13	14	15	16
7	8	9	10	11	12	13	14	15	16	17
8	9	10	11	12	13	14	15	16	17	18
9	10	11	12	13	14	15	16	17	18	19
10	11	12	13	14	15	16	17	18	19	20

·	10	20	30	40	50	60	70	80	90	100
10										
20										
30										
40										
50										
60										
70										
80										
90										
100										

·	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

Մարիամ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Խորհուրդներ մայրերին. ժողովրդական բժշկության գանձարանից

սկիզբը՝ նախորդ համարում

Հարբուխ

Հարբուխը առավել հաճախ հանդիպող ինֆեկցիոն վիրուսային հիվանդություն է, որի հետ մարդկությունն ապարդյուն կերպով պայքարում է դարեր շարունակ: Մեզանից շատերը տարին առնվազն 2 անգամ հարբուխ են ունենում: Առավել հաճախ են հիվանդանում տարեցները եւ երեխաները. առաջինները՝ թուլացած եւ հյուծված իմունային համակարգի, իսկ երեխաները՝ իմունիտետի դեռեւս չձեւավորված լինելու պատճառով:

Տարբերակում են ոչ ագրեսիվ վիրուսներով պայմանավորված սովորական մրսածության հարբուխ եւ ինֆեկցիոն հարբուխ, որի հարուցիչներն են գրիպի, պարագրիպի, ադենովիրուսային վարակի, կարմրուկի, քութեշի, դիֆտերիայի ավելի ագրեսիվ վիրուսները: Բակտերիաները եւ վիրուսներն առկա են մարդու օրգանիզմում եւ խաղաղ գոյակցում են միմյանց եւ մարդու օրգանիզմի հետ: Այդ համակեցությունը միշտ չէ, որ վնասակար է մարդու համար: Ըստ ռուս միկրոկենսաբան եւ համաճարակաբան Նիկոլայ Գամալեյայի՝ անհրաժեշտության դեպքում՝ օրգանիզմը օգտագործում է այդ վիրուսները ներքին հեղուկ միջավայրերի մաքրման համար: Վիրուսները մարդու թշնամիները չեն: Նրանց ձեռնտու չէ հաղթել օրգանիզմին, քանի որ վերջինս նրանց համար հանդիսանում է գոյության միջավայր: Սեզոնային համաճարակների ժամանակ վիրուսները լծվում են օրգանիզմի մաքրման աշխատանքներին, որից հետո վերադառնում են *«խաղաղ գոյակցության»* վիճակին: Միջնադարյան բժշկությունը մեծ փորձ է կուտակել վիրուսային հիվանդությունների բուժման ասպարեզում, որը, դժբախտաբար, հաճախ անտեսվում է ժամանակակից բժշկության կողմից:

Հարբուխի առաջացման պատճառները

Ըստ հիվանդությունների առաջացման հումորալ տեսության՝ հարբուխը օրգանիզմի աղտոտված հեղուկ միջավայրերի բորբոքային հիվանդություն է: Հայ մեծանուն գիտնական, բժիշկ, բնագետ եւ փիլիսոփա, հայկական դասական բժշկության հիմնադիր **Մխիթար Հերացին** ուսումնասիրել է հարբուխի առաջացման պատճառները, որոնք նա շարադրել է *«Ջերմանց Մխիթարություն»* աշխատության մեջ:

Ըստ Հերացու տեսության՝ թեթեւ տենդերը՝ մեկօրյա հարբուխները, պայմանավորված են արտաքին պատճառներով եւ համեմատաբար թեթեւ են անցնում: Նա տարբերակել է տենդով ուղեկցվող եւ առանց տենդի ընթացող հարբուխներ: Առաջինը նա անվանել է *«ավելցուկից եւ գերլցումից»*, իսկ երկրորդը՝ *«հյուծումից եւ թուլությունից»:* Մեկօրյա տենդերի պատճառը նա համարում է *«չափից ավելի ուրախության, տխրության, հոգսաշատ վիճակը»*, որի պատճառով առաջանում է կենտրոնական նյարդային համակարգի հյուծում, օրգանիզմի գերտաքացում, գերսառեցում կամ դրանց համակցումը: Ավելի երկարատեւ եւ ծանր ընթացող տենդերը վկայում են օրգանիզմի հեղուկ միջավայրերում տեղ գտած օրգանական, այսինքն՝ նյութափոխանակության զգալի խանգարումների մասին: Դրանց թվին են դասվում բոլոր սուր վարակիչ հիվանդությունները՝ սովորական հարբուխից մինչեւ ծանր վարակիչ հիվանդություններ:

Հերացու տեսության համաձայն՝ այդ հիվանդություններն առաջանում են հեղուկ միջավայրերում *«բորբոսի»* առաջացման հետեւանքով, ինչը ֆիզիոլոգիական պրոցեսների անընդհատության խանգարման հետեւանք է: Նա համարում էր, որ հիվանդությունն առաջանում է օրգանիզմի *«չորս հիմնական հեղուկների խառնման»* պատճառով: Հեղուկ միջավայրերի բաղադրության փոփոխությունը կարող է առաջանալ նաեւ հաճախակի կրկնվող մեկօրյա տենդերի, շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցության հետեւանքով: Ըստ ակադեմիկոս Սպերանսկու, եթե նյութափոխանակության արգասիքների՝ մետաբոլիտների չափից ավելի կուտակումը չընդհատվեր *«փրկարար»* հարբուխով, մարդը կմահանար իր իսկ սեփական թունավոր մետաբոլիտներից: Ստացվում է, որ մենք կյանքով պարտական ենք մրսածության վիրուսներին:

Օրգանիզմն օգտագործում է հարբուխը՝ որպես իր հեղուկ միջավայրերի նորմալ վիճակը վերականգնելու վթարային միջոց:

Հարբուխի դեպքում պետք է դրսեւորել խելամիտ մոտեցում. ոչ թե թունավորել սեփական օրգանիզմը թունավոր պրեպարատներով, այլ աշխատել գործը չհասցնել հարբուխի խորացմանը եւ բարդություններին:

Վիրուսների ակտիվացման համար նպաստավոր ժամանակ է աշունը եւ գարունը: Այդ ընթացքում օրգանիզմը շատ խոցելի է կենսաբանական էներգիայի պակասի պատճառով: Սեզոնային փոփոխությունները ուղեկցվում են նյութափոխանակության խանգարումներով, որի պատճառով օրգանիզմի հեղուկ միջավայրերում ավելանում են նյութափոխանակության արգասիքները: Հեղուկ միջավայրերի ֆիզիկաքիմիական հավասարակշռության խանգարումը առաջացնում է հարբուխի անհրաժեշտություն, որը թեթեւացնում է օրգանիզմից մետաբոլիտների դուսբերումը:

Հարբուխի ժամանակ օրգանիզմն «ինքնամաքրվում է»՝ վիրուսների միջոցով ազատվելով իր նյութափոխանակության արգասիքներից:

Օրգանիզմի հեղուկ միջավայրերի գերսառեցումը նույնպես խաթարում է կենսաբանական պրոցեսների ընթացքը եւ հանգեցնում է մետաբոլիտների կուտակմանը: Որքան ավելի *«աղտոտված»* է օրգանիզմը եւ թուլացած են նրա իմունային ուժերը, այնքան ավելի հավանական է հարբուխի առաջացումը:

Այսպիսով, վիրուսների օգնությամբ օրգանիզմը ազատվում է նյութափոխանակության արգասիքների՝ մետաբոլիտների գերկուտակումից: Որպես հետեւանք՝ հեղուկ միջավայրերը վերականգնում են նորմալ ֆիզիկաքիմիական բաղադրությունը, ինչը նպաստում է կենսական պրոցեսների բնականոն ընթացքին:

Հարբուխի զարգացումը եւ ընթացքը

Հարբուխն առաջանում է ավելի վաղ, քան ի հայտ են գալիս նրա նշանները: Ուշադիր մարդիկ կարող են նկատել հարբուխի նախանշանները:

Հարբուխի առաջին, այսպես կոչված, «չոր» փուլում դեռ չկան բացահայտ դրսեւորումներ, բայց զգացվում են մրսածության նշաններ՝ ընդհանուր թուլություն, հոգնածություն, գլխացավ, մարմնի ցավ, քրտնարտադրություն, քթի չորություն եւ խցանում, ախորժակի անկում, սրտխառնոց: Սրանք բոլորը նյութափոխանակության արգասիքներով թունավորման նշաններ են: Սնվելով այդ արգասիքներով եւ քայքայելով դրանք միկրոօրգանիզմներն արտազատում են թունավոր նյութեր, որոնք անցնում են հեղուկ միջավայրեր՝ թունավորելով եւ թուլացնելով օրգանիզմը: Այդ ընթացքում օրգանիզմի պաշտպանիչ ուժերը ամեն կերպ ջանում են դուրս բերել թույները, վերականգնել օրգանիզմի հավասարակշռությունը՝ թույլ չտալով, որ հարբուխը զարգանա: Երբեմն դա հաջողվում է, եւ օրգանիզմը ապաքինվում է առանց արտաքին միջամտության:

Հարբուխի երկրորդ՝ խոնավ (եռուն) փուլը հիվանդության որոշիչ փուլն է: Քթից ջրիկ արտահոսքն ուղեկցվում է հաճախակի փռշտալով: Ի հայտ են գալիս թունավորման նշաններ՝ ընդհանուր թուլություն, քրտնարտադրություն, դող, ջերմաստիճանի բարձրացում, խլացման զգացում: Այս վիճակը կարելի է համեմատել սեփական փրկության համար օրգանիզմի կողմից միտումնավոր հրահրված հրդեհի հետ: Թունավոր մետաբոլիտների դուրսմղման նպատակով օրգանիզմը ուժգնացնում է քթից հեղուկի արտահոսքը, որի նպատակն է փրկել կենսական կարեւոր օրգանները թունավորումից:

Հարբուխի երրորդ (թարախակալման) փուլում օրգանիզմը ազատվում է վիրուսներից եւ դրանց կենսագործունեության թունավոր արգասիքներից: Հարբուխի բարդությունները դրսեւորվում են քթի եւ կոկորդի թանձր արտադրություններով: Այս փուլում նկատվում է ընդհանուր վիճակի բարելավում, ջերմության իջեցում, փռշտոցների եւ քթից հեղուկ արտադրության նվազում եւ թանձրացում: Արտադրության դուրսբերումը նեղացած ուղիներից առաջացնում է խցանման եւ բորբոքային պրոցեսների զարգացման վտանգ: Հարբուխի երրորդ փուլը վտանգավոր է հնարավոր բարդություններով՝ հարակից օրգանների (հարքթային խոռոչների, միջին ականջի, ուղեղի արտաքին հատվածների) թարախային բորբոքումներով:

Հարբուխի կանխարգելիչ եւ բուժիչ միջոցառումները

Հարբուխի դեպքում անհրաժեշտ է հետեւել մրսած երեխայի խնամքի **4 հիմնական կանոններին,** որոնք կիրառելի են վերին շնչուղիների բոլոր տեսակի բորբոքային հիվանդությունների ժամանակ: Դրանք միտված են՝ ապահովելու օրգանիզմի կենսագործունեության ջերմային, սննդային, մաշկի հիգիենայի եւ շարժողական ակտիվության ռեժիմները:

Մարմնի ջերմային ռեժիմն առավել կարեւոր է պահպանել հարբուխի բուժման ժամանակ: Այն բավականին պարզ է. պետք է տաք պահել մարմնի առավել խոցելի մասերը՝ գլուխը, գոտկատեղը եւ ոտնաթաթերը, որոնց սառեցումը առաջացնում է մրսածության հիվանդություններ կամ հանգեցնում բարդությունների:

Մաշկի հիգիենայի ռեժիմն ապահովում է մաշկի ծակոտիների թափանցելիության վերականգնումը: Հարբուխի ժամանակ նյութափոխանակության ինտենսիվության աճի պատճառով աճում է նաեւ վնասակար արգասիքների եւ վիրուսների պարունակությունն օրգանիզմում: Վերջինս ստիպված է լինում դրանցից ազատվելու համար գործի դնել բոլոր պահեստային միջոցները՝ մաշկն օգտագործելով որպես երիկամների օգնական: Մաշկի անվնաս մաքրման համար անհրաժեշտ է մրսած երեխայի մաշկը մաքրել գոլ քացախաջրի մեջ թրջած սրբիչով կամ փափուկ լաթով, որից հետո *«պարզաջրել»* մաքուր ջրով թրջած սրբիչով, ապա չորացնել չոր սրբիչով: Նույն կերպ պետք է մաքրել գլխամաշկը: Այս եղանակը կիրառում են նաեւ ջերմությունն իջեցնելու համար՝ օգտագործելով մեկը մեկին ջրով բացած սննդի քացախ կամ օղու լուծույթ (տես Նկար 2):

Սննդի ռեժիմն ուղղված է մարսողական եւ արտազատման օրգանների բեռնվածությունը պակասեցնելուն, ինչի շնորհիվ՝ օրգանիզմը խնայում է ուժերը հիվանդության հետ պայքարելու համար: Հիվանդ երեխային չի կարելի կերակրել դժվարամարս կամ պահածոյացված սննդամթերքով: Ցանկալի է օգտագործել դյուրամարս բուսական սնունդ՝ բանջարեղեն, միրգ, պանիր, հատապտուղներ, եփած ուտելի կանաչիներ, լորձ պարունակող մթերքներ՝ եփած կամ խորոված սոխ, խնձոր, սերկեւիլ, դդում:

Օրվա ընթացքում պետք է հետեւել մեզի գույնին, որը օրգանիզմի *«արձագանքն»* է ներսում կատարվող փոփոխություններին: Առողջ մարդու մեզի գույնը միջին դեղնության է: Եթե նկատել եք, որ երեխայի մեզի գույնը մգացել է, ապա ավելացրեք օգտագործվող հեղուկների քանակը:

Շարժողական ակտիվության ռեժիմը ենթադրում է հիվանդ երեխայի շարժումների չափավորություն, որը նույնպես միտված է կենսական էներգիայի խնայողությանը՝ հիվանդության դեմ ինքնուրույն պայքարելու համար:

Քթի խնամքը. քթային շնչառության դժվարացում

Քիթը շնչառական եւ հոտառական օրգան է, որի հիմնական գործառույթը շնչառությունն է: Քթի խոռոչը պատող լորձաթաղանթը եւ հարքթային խոռոչները կատարում են ներշնչված օդի անհրաժեշտ մշակում՝ այն տաքացնելով եւ խոնավեցնելով: Քթի մեջ եղած մազմզուկների միջոցով օդը ֆիլտրվում է խոշոր մասնիկներից:

Կրծքի երեխաների քթային շնչառության դժվարացման պատճառներից հիմնականը քթի նախաշեմում չորացած լորձից գոյացած կոշտ կեղեւներն են, որոնք ոչ միայն խցանում են քթանցքը, այլեւ կարող են քթին դիպչելուց իրենց սուր եզրերով վնասել քթի լորձաթաղանթը՝ առաջացնելով թեթեւ արյունահոսություն: Նորածինների քթային շնչառության խանգարման պատճառով դժվարանում է կրծքով կերակրումը, ինչը կարող է լրջորեն անդրադառնալ երեխայի աճի եւ զարգացման վրա: Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ զննել նորածնի քթանցքները, եւ կեղեւների կուտակումների դեպքում դրանք փափկեցնել վազելինով կամ բուսայուղով: Դրանից հետո մոտակա կես ժամվա ընթացքում կեղեւները ինքնուրույն դուրս կգան քթից: Կարող եք նաեւ փափկած կեղեւները դուրս քաշել ռետինե փոքրիկ *«տանձիկի»* միջոցով: Քթանցքում կեղեւների գոյացումից խուսափելու համար ցանկալի է հատկապես տարվա շոգ եղանակին կրծքի երեխաների քթանցքների մեջ պարբերաբար կաթեցնել 1-3 կաթիլ ձեթ: Դա հատկապես կարեւոր է անբարենպաստ էկոլոգիայի պայմաններում մեծացող, ինչպես նաեւ կաթնատամների ծկթման շրջանում գտնվող երեխաների համար:



Նկար 2

շարունակությունը էջ 9

Խորհուրդներ մայրերին. ժողովրդական բժշկության գանձարանից

սկիզբը՝ էջ 8

Փոշու եւ վնասակար նյութերով հագեցած օդը խտացնում է քթային լորձը եւ նեղացնում է օդանցքը՝ առաջացնելով շնչառության խանգարումներ: Արտադրությունը հոսում է դեպի քթանցքները՝ առաջացնելով խնչելու անհրաժեշտություն: Ժամանակին քիթը չմաքրելու դեպքում քթային լորձը շարունակում է չորանալ եւ խտանալ՝ դառնալով սոսնձանման նյութ եւ էլ ավելի խցանելով քիթը: Քթային անցուղիների երկարատեւ խցանումը կարող է առաջացնել ինքնաբերական փռշտոցներ, կոկորդի չորություն եւ այլ տհաճ երեւույթներ, որոնցից կարելի է խուսափել՝ քթի լիարժեք հիգիենայի կանոններին հետեւելով: Մանկուց պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ մաքրել քիթը. խորը շունչ առնել, փակել մի քթանցքը եւ մյուսով լիաթոք կտրուկ խնչել: Ոչ մի դեպքում չի կարելի թողնել, որ երեխան քթի արտադրությունը հետ ներս քաշի:

Քթի հնացած օտար մարմինները

Փոքր տարիքի երեխաները հետաքրքրասիրությունը բավարարելու նպատակով հաճախ քթի մեջ մանր առարկաներ են խցկում եւ մոռանում դրանց մասին: Եթե ծնողները ժամանակին դա չեն նկատում, առաջանում է քթային դժվարաշնչություն, լորձաթարախային արտադրություն եւ միակողմանի դժվարաշնչություն: Սրանք այն նշաններն են, որոնք պետք է հուշեն ծնողներին, որ երեխայի քթի մեջ օտար մարմին կա:

Քթի խոռոչում երկար մնացած օտար մարմինները կարող են ժամանակի ընթացքում պատվել կրային եւ ֆոսֆորային աղերով՝ վերածվելով քթաքարերի: Այդպիսի գոյացություններն անվանում են հնացած օտար մարմիններ, որոնք կարող են առաջացնել շնչուղիների, մարսողության օրգանների ծանր բորբոքային հիվանդություններ եւ *«անհայտ ծագման»* մանկական նեվրոզներ: Առավել հաճախ երեխաները գանգատվում են փորացավից եւ սրտխառնոցից, նկատվում են հաճախակի փսխումներ եւ անհանգիստ քուն: Քթային շնչուղիներում հայտնված օտար մարմինները որպես կանոն հեռացնում են բժշկական միջամտությամբ: Սակայն դրանք ոչ միշտ է հաջողվում հայտնաբերել:

Եթե դուք երեխայի քթի մեջ օտար մարմին եք հայտնաբերել, մի փորձեք այն ինքնուրույն հեռացնել որեւէ հարմարանքի միջոցով: Մինչեւ բժշկին դիմելը կարելի է փորձել այն հեռացնել փռշտոցի միջոցով՝ երեխայի քթի մոտ աղացած կծու պղպեղով աման մոտեցնելով: Ցանկալի է փռշտալու ժամանակ երեխային պահել երեսնիվայր՝ *«ծիծեռնակի դիրքով»:* Եթե երեխան կարողանում է ինքնուրույն խնչել, պետք է նախ քթի մեջ անոթասեղմիչ կաթիլներ, այնուհետեւ ձեթ կաթեցնել, որից հետո խնչեցնել այն քթանցքով, որի մեջ գտնվում է օտար մարմինը:

«Չոփչիներ»

Հայոց լեզվի բարբառային բառարանում *«Չոփչի»* բառը բացատրվում է այսպես. *«Գյուղական հեքիմ, որը երեխաների կոկորդում մնացած չոփը՝ կորիզը կամ այլ մանր առարկաները հանում էր փչելով կամ մատով»:* Կարող եմ հաստատել *«չոփչի»* բառի այս սահմանումը, քանի որ անձամբ ծանոթ եմ Ռոզա անունով մի հեքիմի հետ, որը մինչեւ օրս զբաղվում է չոփչիությամբ՝ երեխաների շնչուղիներից զանազան առարկաներ հանելով: Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի բնակիչները հաճախ են օգտվում իրենց շրջանի միակ չոփչիի ծառայություններից: Չոփչիի աշխատանքը նման է աճպարարության: Մի ձեռքով նա սեղմում է երեխայի կոկորդը, որպեսզի օտար մարմինը շնչուղիներ չգնա, եւ բերանով ուժեղ փչում է երեխայի քթանցքի մեջ: Այդ ակնթարթային գործողության արդյունքում երեխայի բերանից գնդակի պես սուլոցով դուրս են թռչում քթի խոռոչներում մնացած օտար մարմինները:

Ես առաջին անգամ դիմեցի տիկին Ռոզային երեք տարեկան մի փոքրիկի կապակցությամբ, որի մոտ կասկածում էի քթի հնացած օտար մարմին: Մինչեւ այդ երեխային տարբեր բժիշկներ (այդ թվում՝ եւ ես) անարդյունք բուժում էին ադենոիդների եւ դրանցով պայմանավորված բարդությունների կապակցությամբ: Երեխայի դեմքին նայելով՝ չոփչին անսխալ ախտորոշեց օտար մարմնի առկայությունը: Նա շոշափեց երեխայի կոկորդի տարբեր հատվածներ եւ վերջնականապես հաստատեց նախնական ախտորոշումը: Հետո նա շատ կտրուկ փչեց երեխայի քթի մեջ: Երեխայի բերանից, կարծես պնեւմատիկ հրացանի փողից, դուրս թռավ օտար մարմինը: Դրանից անմիջապես հետո փոքրիկի տրամադրությունը կտրուկ լավացավ: Նա տարօրինակ էյֆորիայի վիճակում էր, ինչը շատ զարմացրեց բոլոր ականատեսներին, բայց ոչ չոփչիին: Հետագայում ես շատ երեխաների եմ տարել տիկին Ռոզայի մոտ, եւ ամեն անգամ այդ գործողությունից հետո երեխաների տրամադրության ակնհայտ փոփոխություն եմ նկատել:

Առաջին հայացքից հեշտ թվացող այդ գործողությունը իրականում մեծ հմտություն, փորձ եւ ուժեղ թոքեր է պահանջում: Ամեն մեկը չի կարող չոփչի դառնալ: Իրենք, չոփչիները, ասում են, որ դրա համար հատուկ տաղանդ է պետք: Այսօր քիթ-կոկորդ-ականջաբանների մեծ մասը չի ընդունում չոփչիներին: Կարծում եմ, դա մասամբ պայմանավորված է բժշկական սնապարծությամբ: Իմ համոզմամբ՝ այդ կանայք շատ օգտակար գործ են անում, եւ կարող են օգտակար լինել բժիշկներին մանկական նեվրոզների ախտորոշման եւ բուժման հարցում:

Այսօր ընդունված է խոսել ոչ նյութական մշակութային ժառանգության մասին: Մեջբերեմ *«Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայից»* մի հատված: *«Ոչ նյութական մշակութային ժառանգություն» նշանակում է սովորույթները, ներկայացուցչությունները եւ արտահայտությունները, գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաեւ հարակից գործիքները, առարկաները, արտեֆակտները եւ մշակութային տարածքները, որոնք ճանաչվում են համայնքների, խմբերի եւ որոշ դեպքերում անհատների կողմից որպես իրենց մշակութային մաս...»:*

Կարծում եմ, այս սահմանումից ակնհայտ է դառնում, որ չոփչիները եւ նրանց գործունեությունը հանդիսանում են ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտ: Զարմանալի զուգադիպություն. Հայաստանի տարբեր մարզերում այսօր մնացել է այդ գործով զբաղվող ընդամենը երեք կին, երեքի անունն էլ Ռոզա է:

Քթային շնչառության դժվարացման այլ պատճառներ

Քթի միջնապատի միջոցով խոռոչը բաժանվում է 2 մասի: Դրա ծռվածության դեպքում հանդիպող ամենաբնորոշ ախտանիշը միակողմանի կամ երկկողմանի քթային դժվարաշնչությունն է, որը կարող է ուղեկցվել գլխացավերով, հոտառության թուլացումով, ռնգախոսությամբ եւ այլն:

Քթի միջնապատի ծռվածությունը բուժվում է վիրահատական եղանակով: Հաջողված վիրահատությունը վերականգնում է քթային շնչառությունը:

Քթային շնչառության դժվարացման պատճառ կարող է լինել նաեւ ընպանային նշիկի գերաճը՝ ադենոիդները, որի դեպքում երեխան բերանը մշտապես բաց է պահում: Ադենոիդների աճը երբեմն կարող է լինել նաեւ քթի հնացած օտար մարմնի հետեւանք: Ուստի, վիրահատական միջոցներին դիմելուց առաջ անհրաժեշտ է բացառել երեխայի մոտ քթի հնացած օտար մարմնի առկայությունը:

Քթի հիգիենան

Հիշենք, որ քթի միջոցով է օրգանիզմը ստանում իր կենսագործունեության համար անհրաժեշտ օդը, որը քթում ախտահանվում է, խոնավանում եւ ջերմացվում: Ուստի, քթի հիգիենան անչափ կարեւոր է մարդու առողջության համար: Քիթը պետք է մշտապես մաքուր պահել. օրվա ընթացքում խնչելով մաքրել, առավոտյան եւ քնելուց առաջ լվանալ գոլ կամ սենյակային ջերմաստիճանի ջրով կամ աղային թույլ լուծույթով: Քթի կոփման նպատակով կարելի է ջրի ջերմաստիճանը աստիճանաբար նվազեցնել՝ հասցնելով մինչեւ ծորակի ջրի ջերմաստիճանը:

Ցանկալի է քթի եւ կոկորդի հիգիենան եւ կոփումը կատարել միաժամանակ:

Քթային արյունահոսությունները

Քթային արյունահոսությունները երեխայի կյանքում պատահում են տարբեր տարիքում եւ տարբեր հաճախությամբ: Արյունահոսությունները լինում են ինքնաբերական եւ որպես վնասվածքների հետեւանք: Ինքնաբերական արյունահոսությունների դեպքում քիթը գործում է՝ որպես գլխուղեղի անոթների համար վթարային կափույր: Դա քթի կարեւորագույն գործառույթներից մեկն է, որը պաշտպանում է գլխուղեղը գերճնշումից, անոթների վնասումից եւ, որպես հետեւանք՝ ուղեղի կաթվածից: Արյան որոշ քանակություն կորցնելով՝ օրգանիզմն ազատվում է նրա մեջ կուտակված թունավոր նյութերի մի մասից եւ կարգավորում է արյան ճնշումը:

Քթային արյունահոսությունների մեծ մասը երեխաների մոտ սկսվում է քթի միջնապատի՝ քթանցքից 1 սանտիմետր խորության վրա գտնվող հատվածից: Քթի լորձաթաղանթի այդ տիրույթը հարուստ է մակերեսային արյունատար անոթներով, ինչը մի կողմից նպաստավոր է արյունահոսությունների առաջացման, մյուս կողմից էլ՝ վերքերի արագ լավացման համար: Երեխաների քթային արյունահոսությունները մեծամասամբ պատահում են քթի վնասումից, արեւահարումից, ծանր ընթացող ինֆեկցիոն հիվանդություններից, զանազան թունավորումներից եւ ադենոիդների գերաճից: Որպես կանոն, արյունահոսությունը դադարում է ինքն իրեն՝ առանց միջամտության: Արյունահոսությունը սկսելուն պես պետք է երեխային նստեցնել աթոռին՝ գլուխը թեթեւակի դեպի առաջ կախ գցած վիճակում, քթի տակ աման պահել: Այդպիսի դիրքի շնորհիվ արյունը կուլ չի գնում, եւ կարելի է վերահսկել արյան կորստի քանակը ու գործը բարդությունների չհասցնել:

Արյուն տեսնելիս՝ պետք չէ խուճապի մատնվել եւ դրանով վախեցնել երեխային: Արյան վախը կարող է արմատանալ նրա գիտակցության մեջ եւ հետագայում անցանկալի հետեւանքներ ունենալ: Առաջին հերթին հանգստացրե՛ք երեխային, նստեցրե՛ք նրան՝ գլուխը մի փոքր առաջ, քթի տակ թաս դրեք եւ թողեք, որ մի 10-20 կաթիլ արյուն հոսի, այդ ընթացքում պատրաստվե՛ք արյունահոսությունը դադարեցնելուն: Ոչ մի դեպքում չի կարելի երեխայի գլուխը հետ գցել, քանի որ արյունը կլցվի երեխայի ստամոքս եւ կառաջացնի թունավորում, փսխում, հազ եւ շնչահեղձություն:

Եթե արյունը ինքնուրույն կանգ չի առնում, համոզե՛ք երեխային խնչել արյունահոսող քթանցքով, որից հետո կրկին թողեք, որ արյունը հոսի: Որպես կանոն, երեք անգամ այդ գործողությունը կրկնելուց հետո արյունը կանգ է առնում: Արեւայրման հետեւանքով առաջացած արյունահոսության դեպքում ցանկալի է քթի, ճակատի եւ ծոծրակի շրջանում դնել սառը թրջոցներ, որոնք պետք է պարբերաբար սառեցնել: Որպես կանոն, նկարագրված միջոցառումներից հետո արյունահոսությունը դադարում է: Եթե դա տեղի չի ունենում, կարող եք դիմել ստորեւ նկարագրված եղանակներից մեկին (տես Նկար 3):

Նկար 3

Առաջին եղանակն ամենապարզն է. քթի արտաքին մասը (ռունգի վերին անկյունը) 1-3 րոպե մատով սեղմեք միջնապատին՝ արյունահոսող կետի հատվածում: Ավելի ցածր սեղմելու դեպքում արյունահոսությունը չի դադարի, արյունը կկուտակվի քթի խոռոչում, կհոսի դեպի կոկորդ, եւ երեխան այն ստիպված կուլ կտա կամ կթքի: Ստուգելու համար՝ առանց մատը քթից հեռացնելու, երեխայի գլուխը հետ գցեք: Եթե քթի մեջ արյուն կա, այն կհոսի դեպի կոկորդը: Փոխեք մատի դիրքը՝ սեղմելով ռունգի վերին հատվածը, եւս 3 րոպե սեղմած պահեք, եւ եթե արյունը չի դադարում, խնչեցրեք երեխային եւ կրկին սեղմեք քիթը՝ այս անգամ պահելով փոքր-ինչ ավելի երկար:

Եթե սրանից հետո էլ արյունը չդադարի, անցե՛ք երկրորդ եղանակին: Երեխայի բթամատի հաստության ամուր եւ խիտ գլանակ պատրաստեք՝ բամբակը պտտող շարժումներով փաթաթելով ականջի չոփիկի վրա: Գլանակը պատեք վազելինով, պտտող շարժումներով մինչեւ վերջ մտցրեք երեխայի քթանցքի մեջ եւ թողեք 30 րոպե: Գլանակը պետք է ամբողջությամբ *«լցնի»* քթանցքը: Այս եղանակը, որպես կանոն, պսակվում է հաջողությամբ, եթե խծուծը բավականաչափ խորն է դրվել:

Եթե կես ժամ անց խծուծը հանելուց հետո արյունը չդադարի, կարելի է այն թողնել ավելի երկար ժամանակով, եւ եթե սա էլ չօգնի՝ դիմել բժշկի:

(շարունակելի)

Սուրեն ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ
քիթ-կոկորդ-ականջաբան, բժշկական գիտությունների թեկնածու

Գծանկարները՝ Լեւոն ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆԻ

Կարդա՛ եւ ծանոթացրո՛ւ

Հոգեշահ ընթերցանություն

Խորհրդային տարիներին, թեւ գրահրատարակչությունն ապահովում էր աննախադեպ բազմատպաքանակություն, մեզանում մշտապես առկա է եղել հանրամատչելի եւ մանկապատանեկան գրականության որոշակի պակաս. սերնդին մատուցվել է հիմնականում թարգմանական գրականություն: Անկախության շրջանում, հատկապես՝ վերջին տասնամյակում, մեզանում գրահրատարակչական հսկայական առաջընթաց է ապահովվել, թե՛ մասնագիտական եւ ուսումնագիտական, թե՛ գեղարվեստական ու թարգմանական եւ թե մանկապատանեկան ու հանրամատչելի գրականության ոլորտներում: Այսօր մեր գրախանութների հսկայական դարակաշարերում աչք են շոյում պատկերազարդ, պոլիգրաֆիկական շքեղ մակարդակով տարաբովանդակ հազարանուն գրքեր,որոնց հանդեպ ընթերցողական պահանջարկն օրավուր մեծանում է: Սերունդը շարունակում է կարդալ եւ ավելի հաճախակի օգտվել հատկապես հանրագիտարանային, տեղեկատու բնույթի գրական նությունից:

Նորօրյա հանրամատչելի հանրագիտարանային բնույթի գրականության ոլորտում իր ուրույն տեղն ունի մանկավարժ, լրագրող, հրապարակախոս Ալբերտ Միքայելյանը: Վերջին տարիներին նա ընթերցողի սեղանին դրեց մեկը մյուսից ուշագրավ ժողովածուների մի ամբողջ շարք, տեղեկատուներ, որ լրացուցիչ գրականության ընտիր գործիքներ կարող են լինել ցանկացած ուսուցչի ձեռքին: Դրանք են՝ *«Մտքի հրավառություն», «Մարգաշխարհի հարյուր գերասաստղեր», «Արմատներ, անհատներ, ավանդներ», «Իմաստասեր», «Հայոց երեւելիներ», «Տաղանդների տաղավար», «Հոգեշահ ընթերցանություն», «Համաշխարհային քաղաքակրթության կրողները», «Մարտադաշտում. մահվան մահճում…»* ժողովածուները:

Փոքր-ինչ ավելի մանրամասն անդրադառնանք վերջին երկուսին: *«Համաշխարհային քաղաքակրթության կրողները»* տեղեկատուն նշանավոր մարդկանց մասին է, ովքեր անջնջելի հետք են թողել պատմության մեջ, նշանակալի ներդրում ունեցել գիտության, կրթության, մշակույթի, կրոնի, քաղաքականության, ռազմարվեստի եւ մարզական ոլորտներում: Գրքում տեղ են գտել ազգային եւ համաշխարհային համ-

բավ ունեցող՝ 25 ազգեր ներկայացնող շուրջ 1500 անհատներ: Դրանց մեջ կան եւ հայտնիներ, որոնց մասին տեղեկություններ կարելի է քաղել հայերեն եւ այլ լեզուներով բազմաթիվ հանրագիտարաններից, կան նաեւ նոր անուններ, որ ներկայացվում են առաջին անգամ: Հեղինակն իր առջեւ չի դրել գիտական նկարագրության խնդիր, այլ, մնալով հրապարակախոսության ոճի մեջ, ձգտել է լինել հնարավորինս հակիրճ, ընդգրկել առավել համապարփակ տեղեկատվություն, ինչը լիովին բավարար է եղել իր նպատակի իրագործման համար: Իսկ Ալբերտ Միքայելյանի նպատակը ե՛ւ այս գրքում, ե՛ւ իր բոլոր տեղեկատու ժողովածուներում մեկն է՝ նպաստել սերնդի կրթության եւ դաստիարակության գործին, աջակցել ուցուցչին՝ սաներին փոխանցել մտահորիզոնն ընդլայնող ճանաչողական բնույթի մնայուն գիտելիքներ: *«Համաշխարհային քաղաքակրթության կրողները»* գրքում կարելի է վերստին ծանոթանալ Մակեդոնացու, Կեսարի, Նապոլեոնի, Սուվորովի եւ այլ բազմաթիվ հանճարեղ զորավարների հետ, իհարկե, այդ շարքում հանդիպելով նաեւ Անդրանիկին, Նժդեհին… Այստեղ են Շոպենհաուերը, Հեգելը, Բախը, Բեթհովենը,



Ֆիրդուսին, Ռուսթավելին, Շեքսպիրը, Դանթեն, այստեղ են նաեւ Նարեկացին ու Քուչակը, մեր մյուս անմահ գրողներն ու նկարիչները, երգահաններն ու կատարող երաժիշտները: Թվարկելու կարիք չկա: Անհատները դասակարգված են՝ ըստ ազգության եւ ուղեկցվում են տվյալ ժողովրդի մասին համառոտ տեղեկություններով:

Գրքում տեղ են գտել նաեւ այլ ուշագրավ փաստեր, որ զետեղված են *«Հավելված»* խորագրի ներքո. ազգային ավանդություններ, միավորների միջազգային համակարգ, շախմատի աշխարհի չեմպիոնները, Հին աշխարհի հրաշալիքները, ժամանակակից գերտերությունները, հայոց հրաշալիքները, աշխարհի ժողովուրդների էպոսները, գյուտարարներ, հարբեցող հանճարներ, ձախլիկ հանճարներ եւ այլն:

Այս ժողովածուն Ալբերտ Միքայելյանի հետ կազմել է նրա որդին՝ Սերոբ Միքայելյանը, ով տնտեսագետ է եւ գործարար, սակայն այս դեպքում դարձել է համահեղինակ, ապահովել կարեւոր մասնակցություն՝ ըստ իր նախասիրությունների:

Ալբերտ Միքայելյանի՝ ներկայացվող երկրորդ գիրքը լույս է տեսել բոլորովին վերջերս: Վերնագիրը կարող է թվալ փոքր-ինչ արտառոց՝ *«Մարտադաշտում. մահվան մահճում…»:* Այս գրքում տեղ են գտել համաշխարհային պատմության ամենատարբեր բնագավառներում համընդհանուր ճանաչում գտած անհատների հրաժեշտի խոսքերը, վերջին արտահայտությունները, գրառումները, որ արել են մահվանից առաջ: Ժողովածուում տեղ են գտել 118 հայտնի մարդկանց վերջին խոսքերը:

Գիրքն սկսվում է այբբենական անվանացանկով, որն օգնում է ընթերցողին տվյալ պահին արագ գտնել իրեն հետաքրքրող գործչի հրաժեշտի խոսքը: Անշուշտ, գիտականության տեսակետից այս կամ այն անհատի դեպքում կարելի է վիճարկել տվյալ տեղեկության հավաստիությունը: Սակայն անկախ այն բանից, թե հիշատակված արտահայտությունը տվյալ անհատի բանավոր վերջին խոսքն է, թե մահվանից շատ առաջ արված գրառում, այնուամենայնիվ մեջբերվող միտքը պատկանում է տվյալ գործչին եւ բնութագրական է նրա ապրած կյանքի եւ գործի համար: Բացի այդ, մանավանդ հայ իրականության մեջ, մեր բազմաթիվ հայտի դեմքեր իրենց մահկանացուն կնքել են տարբեր իրավիճակներում եւ ժողովրդի հիշողության մեջ ավանդաբար մնացել են հրաժեշտի մի քանի խոսքեր, որոնք այս դեպքում կարող են եւ չհամընկնել հեղինակի ներկայացրածի հետ:

Լինելով մանկավարժ, շուրջ 50 տարի աշխատելով կրթության համակարգում՝ հեղինակը, նաեւ իր մասնագիտական փորձից ելնելով, կարողացել է հատկապես բարձր դասարանների աշակերտներին ներկայացնել ճանաչողական օգտակար տեղեկատու:

Ավելացնենք, որ այս գրքում եւս զետեղված է ուշագրավ հավելված, որտեղ ընդգրկված են հայտնի մարդկանց ասույթներ՝ կյանքի եւ մահվան մասին, ինչպես նաեւ մի շարք ժողովուրդների ավանդապատումներ:

Ամփոփելով՝ կրկին ընդգծենք. Ալբերտ Միքայելյանի տեղեկատուները ոչ միայն երիտասարդների համընդհանուր զարգացածությանը նպաստող գիտելիքների յուրատեսակ շտեմարաններ են, այլեւ, ընդհանրապես, հոգեշահ ընթերցանության հարուստ նյութ՝ ամեն տարիքի ու ամեն մասնագիտության գրքասերների համար:

Լ. ԳԱԼՍՏՅԱՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* եւ *«Խոհարարական գործ»* մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. դիմում (Ձեւ 1),

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիրը (բնօրինակը եւ պատճենը),

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են ***2024 թ. մարտի 20-ից մինչեւ ապրիլի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:30-ից մինչեւ 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից***, Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Երեւան, Բուռնազյան 143:

Մրցույթը կկայանա ***2024 թ. ապրիլի 4-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (091) 11-34-98 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Վ. Մայակովսկու անվան հ. 7 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (10 դասաժամ), մայրենիի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մարտի 20-ից մինչեւ ապրիլի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***ապրիլի 5-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի Վ. Մայակովսկու անվան հ. 7 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Գրիգոր լուսավորիչ 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 52-46-21 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 159 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (9 դասաժամ), աշխարհագրության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մարտի 21-ից մինչեւ ապրիլի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***ապրիլի 9-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի հ. 159 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան փ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 64-11-33 հեռախոսահամարով:

Փորձի՛ր լրացնել

Քարերի աշխարհ



Ուղղահայաց

1. Այս քարատեսակը երկրից դուրս հանելու համար եգիպտոսում սահմանված է 1000 դոլար տուգանք. մարջան, բուստ կամ ...: **2.** Նահանգ ԱՄՆ-ում, ուր 1957 թ.-ին հայտնաբերվել է Չեմբերստ քարատեսակը: **6.** Բարձր կարգի քար: Նրա փոշին մահացու է: **7.** Հրաբխային հիմնական ապար, կիրառում են շենքերի հիմքերի համար, կամուրջների եւ այլ բարդ կառույցներում: **9.** Բնական քարերի մեջ իր ամրությամբ 3-րդ տեղը զբաղեցնող քար: **12.** Միջին կարծրությամբ լեռնային քարատեսակ: Գեղազարդիչ քար է, օգտագործվում է շինարարության եւ քանդակագործության մեջ: **13.** Մեղեսիկ (եղեգնաքար) քարի մուգ տեսակի անվանումը: **19.** Ալեքսանդր 2-րդ ցարի անունով կոչվող Ալեքսանդրիտ քարը մաքրում է ...ը եւ ուժեղացնում անոթները: **22.** Համաստեղություն,որին համապատասխանում է Ամեթիստ քարը: **23.** Համաստեղություն, որին համապատասխանում է Նռնաքարը: **27.** Դեկորատիվ քարատեսակ: **28.** Շափյուղա կիսաթանկարժեք քարի այլ անվանումներից: **33.** *«Ձկներ»* համաստեղության թալիսման քարը՝ խրիզոլիթ կամ ...: **34.** Քաղաք ՀՀ-ում, ուր գտնվում է հնագույն մեգալիթյան համալիրը, որը կազմված է 200-ից ավելի ուղղահայաց կանգնած (2-3 մետր) քարերից: **35.** Կապտագույն թանկարժեք քար՝ լաջ-վարդ կամ...: **41.** Նռնաքարերի խմբի միներալ՝ բոհեմական ռուբին կամ...: **43.** Մոլորակ, որն իր ազդեցության ուժով խորհրդանշորեն կապված է մարգարիտ, ադուլյար եւ ագաթ քարերի հետ:

Հորիզոնական

3. Միներալ, որից խոշոր կուտակումներ կան ԱՄՆ-ում, Շրի-Լանկայում եւ Արեւելյան Ավստրալիայում: **4.** Լենկթեմուրի տապանաքարը պատրաստված է սեւ ...ի ամբողջական կտորից: **5.** Մարդկանց բացասական էներգիայից պաշտպանող կիսաթանկարժեք քար: **8.** Օրգանական ծագում ունեցող քար, որն խորհուրդ է տրվում կրել միայն շարանի մեջ: **10.** *«...եր, ...եր, Հայաստանի, Սարերն ի վար հոսող ...եր, Երկինքն ի վեր խոսող ...եր, ...եր վանքի ու ոստանի»* (Համո Սահյան, *«...եր Հայաստանի»*): **11.** Պետություն, որն (ինչպես եւ Շրի-Լանկան) համարվում է Լուսնաքար միներալի հայրենիքը: **14.** Օրգանական ծագում ունեցող քար: Այն գտնվում է երկփեղկանիների, փորոտանիների եւ գլխոտանիների խեցիներում: **15.** Այս քարատեսակը օգտագործվել է նաեւ Ֆուտբոլի Միջազգային Ֆեդերացիայի աշխարհի առաջնության գավաթի պատրաստման համար. մալաքիտ կամ ...: **16.** Թանկարժեք քար՝ քվարցի մանուշակագույն տարբերակը: **17.** Քրիզոբերիլի տարատեսակներից, որին ընդունված է անվանել *«Կատվի աչք»:* **18.** Խոշոր հոգեւոր ուսուցիչ, ում արձանը՝ 6 մետր բարձրությամբ, պատրաստված է կաթնագույն նեֆրիտի ամբողջական կտորից: **20.** Կիսաթանկարժեք քար, որից Հայաստանում կա հանքավայր: **21.** Այս ատղն իր ազդեցության ուժով խորհրդանշորեն կապված է Ալմաստ, Վանակն, Ցիրկոն, Տուրմալին քարերի հետ: **22.** Համաստեղություն, որի տակ ծնվածների համար թալիսման է համարվում ակվամարին քարը: **24.** 1956թ. հայտնաբերված այս քարը 2005թ-ին Գինեսի գրքում նկարագրվում է որպես երկրի ամենահազվագյուտ գոհար հանքանյութ: **25.** Հայկական քարատեսակ: **26.** 1945թ. իռլանդացի երկրաբան Էդվարդ Չարլզ Թաֆեի կողմից հայտնաբերված միներալը: **29.** Թանկարժեք քար՝ Սուտակ կամ ...: **30.** Աշխարհի 25 ամենագեղեցիկ քարերից՝ Ծիածանաքար կամ ...: **31.** Քվարցի տարատեսակ քար՝ *«...ի աչք»:* **32.** Սիլիցիումի ու թթվածնի ատոմներից բաղկացած միներալ, որն ամենատարածված միներալների շարքում երկրորդն է: **36.** 1956թ. ֆրանսիացի երկրաբան Հիբոնի կողմից հայտնաբերված միներալը: **37.** Սիլիկատների խմբի միներալ: Կիրառվում է որպես զարդաքար եւ երեսապատման քար: **38.** Այսպես են անվանում Կարմիր բերիլ քարը, որը հայտնագործել է ամերիկացի միներալագետ Մեյնարդ Բիքսբին, Յուտա նահանգի Բիվեր քաղաքի մերձակայքում (1904թ.): **39.** Երկրորդ կարգի թանկարժեք քար, ունի բարձր կարծրություն: **40.** Նստվածքային ապար, ունի բարձր կարծրություն: Կիրառվում է ոսկերչական գործում. Հասպիս կամ ...: **42.** Բուսական ծագում ունեցող հանածո, այն առաջացել է փշատերեւ ծառերի խեժից՝ յուրահատուկ պայմանների հետեւանքով. Յանտար կամ ...: **44.** Նռնաքարերի խմբի միներալ, օգտագործվում է՝ որպես թանկարժեք քար եւ հղկանյութ: **45.** Դեկորատիվ քարատեսակ: **46.** Միներալ՝ քվարցի սեւ կամ մուգ շագանակագույն բյուրեղներ: **47.** Բնական, գեղեցիկ քարատեսակ: Այն իր մեջ է կենտրոնացնում արեգակնային էներգիան: Այս քարն ունի հաջողությունը եւ փողը գրավելու հատկություն:

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Դալի, **2.** Պիես, **3.** Աշուն, **4.** Անագ, **6.** Անապակ, **8.** Կոլլաժ, **9.** Չիմանան, **10.** Թափառում, **13.** Արփի, **14.** Աբայ, **16.** Բնավ, **17.** Վանա, **21.** Սիփան, **22.** Գասպարյան, **23.** Տերտերյան, **24.** Անշլյուս, **25.** Արմենիա, **26.** Կարախան, **27.** Սանասար, **29.** Ալյասկա, **30.** Աղավնին, **37.** Տասսո, **41.** Տուրգենեւ, **43.** Գլենդել **44.** Աջալ, **45.** Գաթա, **46.** Հերացի, **48.** Կոմա, **49.** Նուրբ, **50.** Օրբելի, **54.** Իսիդ, **55.** Գթոտ, **56.** Ոգիս, **57.** Արեգ:

Հորիզոնական

5. Շահազիզ, **7.** Ուշինսկի, **11.** Ջիվանի, **12.** Սագան, **15.** Գալձակ, **18.** Բալայան, **19.** Ալյանաք, **20.** Արիսյան, **24.** Անապատ, **28.** Գեղամա, **31.** Լալայան, **32.** Ուշիմ, **33.** Յուան, **34.** Երանյան, **35.** Կանդելա, **36.** Սյուն, **38.** Սանդ, **39.** Շարական, **40.** Ստացավ, **42.** Վահագն, **47.** Ջոկոնդա, **51.** Ագրեսիա, **52.** Թյուրինգ, **53.** Անձավի, **55.** Գարբո, **57.** Աներեր, **58.** Սիզիփոս, **59.** Լիբերիա:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Մարալիկի հ. 1 միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (12 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների խումբ, 6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մարտի 20-ից մինչեւ ապրիլի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***ապրիլի 5-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Մարալիկի հ. 1 միջնակարգ դպրոցում, հասցե՝ Ախուրյան համայնք, ք. Մարալիկ, Հ. Շահինյան փ., 6-րդ նրբանցք, շ. 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 11-01-58 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (զինղեկ, 0,5 դրույք), ֆիզկուլտուրայի (19 ժամ), տեխնոլոգիայի (1-ին խումբ՝ 1 դասաժամ, 2-րդ խումբ՝ 3 դասաժամ), ազգային երգ ու պարի (1 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընունվում են ***մինչեւ մարտի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***ապրիլի 4-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Բաղրամյան համայնք, գ. Արտամետ, Գ. Նժդեհի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 18-58-74 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Լեռնակերտի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի երաժշտության (8 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

